

ՅԱՂԹԱՀԱՐԵԼ
ՆԵՐՔԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ
ԱՍՏՈՒՕՈՅ
ԽՕՍՔԻՆ
ՄԻՋՈՑԱԻ

ՃՈՅՍ ՄԱՅԸՐ



ՕԳՆԷ՛ ԻՆԾԻ, ԵՍ

ՅՈՒՍԱԽԱԲՈՒԱԾ ԵՍ



**ՕԳՆԷ՛ ԻՆԾԻ, ԵՍ
ՅՈՒՍԱԽԱԲՈՒԱԾ ԵՄ**



ՅԱՂԹԱՀԱՐԵԼ ՆԵՐՔԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ
ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ՄԻՋՈՑԱԻ

ՃՈՅՍ ՄԱՅԸՐ

Օգնէ՛ ինձի, ես յուսախաբուած եմ,
արեւմտահայերէն
Հեղինակ՝ Ճոյս Մայլըր

Տպագրութիւն, Տողաշարում եւ էջադրութիւն
PTW [Հրատարակիչներ եւ թարգմանիչներ]
Հեռ. Թիւ 00202-26678980 - 26678981
www.ptwegypt.com

Բուն հրատարակութիւնը անգլերեն լեզուով
հետեւեալ վերնագրով՝ Help Me I'm
Discouraged!

Copyrights © Joyce Meyer
National No.: 24954/2010
ISBN: 978-977-443-100-5

Տպագրական բոլոր իրաւունքը
վերապահուած է հեղինակին:
Այս գիրքէն որեւէ մաս վերարտադրելը
կարելի է
միայն հրատարակիչին արտօնութեամբ:

Printed In Egypt © 2011 By PTW

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Նախաբան 5

Բաժին Ա

*Ազգայր ըլլալ սատրանային
հարստահարություններէն*

1. Ամենազորը կապրի մեր մէջ..... 9
2. Վեց բան, որ մեր ողջ զօրութեամբ
պէտք է կատարենք.....23
3. Ինչպէ՛ս վարուիլ յուսախաբութեան հետ ... 35
4. Վստահութիւն ՅԻՍՈՒՍԻ վրայ47
5. Մտածել ԱՍՏՈՒԾՈՅ գործերուն մասին.....57
6. Նոր գինին եւ նոր տիկերը 81
Վերջաբան 89

Բաժին Բ

Սուրբգրային համարներ

- Սուրբգրային համարներ՝ յաղթելու
յուսախաբութեանը..... 93
- Աղօթք՝ յաղթելու յուսախաբութեանը 97
- Աստուծոյ հետ անձնական
հաղորդակցութեան աղօթք 99
- Հեղինակին մասին.....101

ՆԱԽԱԲԱՆ



Բոլորս ալ ատեն ատեն կը յուսախաբուինք: Իրականութեան մէջ զարմանալի է, եթէ շաբթուայ ընթացքին չհանդիպինք յուսախաբութեան:

Մենք կը ցանկանք որոշ բաներ, եւ երբ մեր մտածումները չիրականանան, կը յուսախաբուինք: Եթէ յուսախաբութիւնը շիտակ ձեւով չլուծենք, այն կը վերածուի յուսահատութեան:

Եթէ երկար ժամանակ յուսահատած մնանք, յաջորդաբար կ'առանձնանանք, և ապա անկարող կը դառնանք ստանձնելու որեւէ գործ: Շատ քրիստոնէաներ պարտուողական կեանք կապրին, որովհետեւ չեն գիտեր ինչպէս դիմագրաւել յուսահատութեան պահերը: Այն պարապութիւնը զոր կապրին, շատ հաւանական է որ սկսած է, ճիշդ լուծում չ'ստացած փոքր յուսահատութիւններէ:

Յիսուս կը բժշկէ բոլոր անոնք, որոնք սատանային կողմանէ հարստահարուած են (Գործք 10.38): Յուսահատուած, ընկճուած,

քանդուած կեանք ապրիլը Աստուծոյ կամքը
չէ: Երբ կը յուսահատինք, պէտք է սորվինք
անգամ մը եւս վերականգնիլ, որպէսզի
ենթակայ չ'լլանք յուսախաբութեան եւ
չկործանինք: Երբ մեր յոյսն ու վստահութիւնը
սորվինք դնել ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ վրայ
(Ա Կորնթ. 10.4) և հակառակ կանգնինք
սատանային յարձակումներուն, կրնանք
ապրիլ խաղաղութեամբ, առանց յուսահա-
տութեան:



ԲԱԺԻՆ Ա



**ԱԶԱՏ ԸԼԼԱԼ ՍԱՏԱՆԱՅԻՆ
ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ**






1



ԱՄԵՆԱԶՈՐԸ ԿԱՊՐԻ ՄԵՐ ՄԷՋ

*«Յիսուս որ նազարեթէն էր, զոր
Ասորուստ օճեց Սուրբ Հոգիով և
զօրութիւնով, պարտեցաւ բարիք
ընելով ու սապրանայէն բոլոր
փանջուածները բժշկելով, քանզի
Ասորուստ իր հետ էր»:*

Գործք 10.38





ԱՄԵՆԱԶՈՐԸ ԿԱՊՐԻ ՄԵՐ ՄԷՋ

Յիսուս Իր երկրային ծառայութեան ընթացքին, Սուրբ Հոգիին զօրութեամբ ազատութիւն կուտար այդ բոլոր մարդոց, որոնք սատանայէն ճնշուած էին: Այդ զօրութիւնը մերն է նաեւ այսօր. Աստուծոյ կամքը այն չէ, որ Իր զաւակները ճնշուած կամ ընկճուած ըլլան: Յիսուսի զօրութիւնը այսօր կարող է մեզ ազատել հարստահարութենէ:

Ըստ «վերստերի» բառարանին, ճնշել կը նշանակէ ծանրաբեռնել, յատկապէս ճնշել միտքը կամ հոգին:

ԱՌԱՋՆՈՐԳՈՒԻԼ ՀՈԳԻՈՎ

Հետեւելով Սուրբ Հոգիին առաջնորդութեան, եւ թոյլ տալով որ Սուրբ Հոգիին

պտուղը (Գաղատ. 5.22,23) յայտնի ըլլայ մեր կեանքին մէջ, նախաձեռնողներ ու ստեղծագործողներ կը դառնանք: Շատեր ձանձրացած են, քանի իրենք ընկճուած վիճակի մէջ կ'ապրին, փոխանակ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ յաղթական կեանքը վայելելու:

Եթէ ի գործ դնենք Աստուծոյ մեզ տուած ստեղծագործող կարողութիւնը, ան կը հեռացնէ ձանձրոյթը: Ոմանք ասելի ստեղծագործող են, քան ուրիշներ, բայց մեզմէ ամէն մէկը կարող է գործածել իր ստեղծագործող կարողութիւնը և հաստատամտութիւնը, մեր կեանքը դարձնելով բաւարարուած, և ասելի օգտակար և կատարեալ:

ՍԱՏԱՆԱՆ ՊԷՏՔ Է ՓԱԽՉԻ ՔԵԶՄԷ

Սատանան կը խաբէ մեզ (Հովհ. 8.44), եթէ մենք հաստատամիտ չենք, իր սուտերուն առիթ տանք ու մտիկ ընենք, մեր կեանքին մէջ տեղ կուտանք իրեն: Ան կը նմանի մռնչող առիծի (Ա Պետր. 5.8), բայց մենք Յուդայի առիծը ունինք՝

«ՅԻՍՈՒՍ»ը որ մեր մէջ է. մենք պէտք է մոնչանք: Երբ առնէ մեզի առաջին քայլը մօտենալու, հոգեւորապէս այնքան արթուն պէտք է ըլլանք, որ ետ դնենք անոր շուտով: Սատանան միշտ կը փորձէ յարձակիլ, և որքան մենք ետ քաշուինք, այնքան ան կը շարունակէ յառաջանալ: Բայց եթէ անոր դէմ կենանք այն իշխանութեամբ, որ ունինք Յիսուս Քրիստոսով, սատանան ետ կը քաշուի: Մենք պէտք է շարունակենք իշխանութեամբ հակառակիլ անոր: Եթէ մենք դադրինք պատերազմելէ, ան կ'ըսկսի յարձակիլ անհանգստացնելով մեզ: Սատանան ստախօս է և ինքնագով: Ան կուգայ առիծի նման, բայց առիծ չէ: Յիսուս Քրիստոսի հաւատալով, մենք զօրութիւն կ'ունենանք, «քանզի մեծ է Հոգին որ մեր մէջ է, քան թէ անիկա որ աշխարհի մէջ է» (Ա Հովհ. 4.4): Աստուծոյ խօսքը լաւ իմացիր, որ դէմ դնես սատանային և ըսես. «Սատանայ, ո՛չ, ես քեզի մտիկ չեմ ըներ»: Մեր կեանքը կարող ենք փճացնել վախնալով սատանայէն ու պահուրտելով, կամ, ստիպելով անոր որ ետ դառնայ իր մղած պատերազմէն:

ԸՆՏՐԷ ԿԵԱՆՔԸ

«Այսօր երկինքը ու երկիրը վկայ կը բռնեն ձեզի, որ կեանքն ու մահը, օրհնությունը ու անէծքը ձեր առջեւ դրի: Ուրեմն կեանքը ընտրէ, որպէսզի ապրիք դուն եւ քու սերունդդ»:

Բ Օրինաց 30.19

Ուրախութիւնն ու երջանկութիւնը դուրսէն չեն գար: Անոնք մեր մէջ են: Անոնք գիտակցաբար անձնական որոշումներ են, որ մենք պէտք է առնենք օրական, ու մեր ընտրութիւնն է: Մեր հաստատութեան մէջ, երիտասարդ տիկին մը գտնուի, որու կեանքին մէջ շատ բաներ պէտք է փոխուին. բայց հակառակ իր բոլոր հոգերուն ու դժուարութիւններուն, ան ուրախութեամբ եւ երջանկութեամբ լեցուն է, ոչ որովհետեւ ինք որեւէ դժուարութիւն չունի, այլ ուրախ է որովհետեւ ան որոշում առած է լեցուիլ Տէրոջ ուրախութեամբ:

Մեզմէ իւրաքանչիւրըս պէտք է այս ընտրութիւնը ընենք ամէն օր: Կամ կ'ընտրենք մտիկ ընել սատանային և անոր թոյլ տալ որ կործանէ մեր կեանքը,

Եւ կամ կ'ընտրենք հաստատամտութեամբ դէմ կանգնիլ անոր դէմ, լիարժէք կեանք մը ապրելու, զոր Աստուած մեզի համար տրամադրած է Իր Որդւոյն Յիսուսի միջոցաւ:

Մենք, որպէս Աստուծոյ զաւակները, երկինք պիտի հասնինք. բայց արդեօք կ'ուզեմք հասնիլ երկինք եւ անդրադառնալ որ շատ աւելի ուրախութիւն կրնայինք ունենալ մեր կեանքի ընթացքին: Եկէք ընտրենք կեանքը, ինչպէս որ Տէրը կը փափաքի:

ԱՐԹՈՒՆ ԿԵՑԷՔ ԵՒ ԱՂՕԹՔ ԸՐԷՔ

«Արթուն կեցէք և աղօթք ըրէք (խիստ ուշադիր եղէք) որպէսզի փորձութեան մէջ չմտնէք: Հոգին յօժար է, բայց մարմինը տկար»:

Մատթ. 26.41

Երեւակայեցէք դուք լուր ունիք, որ ձեր տունը շրջապատուած է թշնամիին կողմանէ և որեւէ մէկ վայրկեան կարող է յարձակիլ ձեր վրայ: Ինչ կը կարծեք, արթուն կը մնայիք հսկելու ձեր տանը վրայ: Ինչ կ'ընէք եթէ որեւէ մէկ պատճառով պիտի

չկարենայիք արթուն մնալ և հսկել ձեր տանը վրայ: Արդեօք չէիք ծրագրեր, որ ձեր ընտանիքէն ուրիշ անդամ մը արթուն մնայ եւ զգուշացնէ վտանքի պահուն:

Այս համարին մէջ Յիսուս մեզի կը պատուիրէ արթուն մնալ, խիստ ուշադիր ըլլալ, հսկել եւ աղօթել: Որպէս հաւատացեալներ՝ մենք պէտք է արթուն եւ զգոյշ ըլլանք, պէտք է պատրաստուինք դէմ դնելու թշնամիին յարձակումներուն:

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԵՂԻՐ

«Պատերազմէ հաւատքին բարի պատերազմը»:

Ա Տիմոթ. 6.12

Անդրդուելի ըլլալ կը նշանակէ պատերազմող ըլլալ: Ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ ան պատերազմեցաւ հաւատքի բարի պատերազմը (Բ Տիմոթ. 4.7), ան նաեւ Տիմոթէոսին ալ սորվեցուց հաւատքի բարի պատերազմը պատերազմիլ:

Մեր ամենօրեայ կեանքին մէջ նոյնպէս մենք ալ պէտք է պատերազմինք հաւատքի

բարի պատերազմը հոգեւոր թշնամիներու դէմ, պայքարելով թէ մեր մտքերուն եւ թէ սրտերուն մէջ: Հաւատքի բարի պատերազմ կը նշանակէ ճանչնալ թշնամին, իմանալ թէ ամէն ինչ շիտակ կ'ընթանայ, եւ հասկնալ նաեւ երբ սխալ կ'ընթանայ: Օրինակ անգամ մը կը խօսէի անձի մը հետ եւ երբ իրեն մտիկ կ'նէի, մէջըս նեղութիւն կ'ըզգայի, եւ այս բանը կը պատահէր ամէն անգամ, որ հետը կը խօսէի, միշտ կը հարցնէի. «Ո՞ր է սխալը, ես չեմ հասկնար ինչ կը պատահի», եւ երբ իրարու հանդիպինք և խօսինք, ես անհանգիստ կ'ըլլամ եւ կ'ըսկսիմ մտածելու. «Արդեօք ճիշդ կը հասկնայ ըսածներըս»: Յաջորդ հանդիպումին որոշեցի ւաւելի հաստատակամ մօտեցում ցոյց տալ: Սկսայ աղօթել Յիսուս Քրիստոսի անունով, եւ իշխանութիւն ունիմ չարին դէմ, եւ իմ հոգըս չէ, թէ այս մարդը ինչ կը մտածէ իմ մասիս. այդ հարցը իր եւ Աստուծոյ միջեւ է: Ես պէտք է ազատ ըլլամ: Ես չեմ կրնար ամբողջ կեանքըս մտածել եւ անհանգստանալ, թէ մարդիկ ինչ կը մտածեն իմ մասիս: Սատանայ, ես այլեւս անհանգիստ չեմ, Յիսուսի անունով վերջ գտած է իմ անհանգստութիւնս:

Այս է մեր հարցը, շատ անգամ մենք ժխտական ենք, չենք պատերազմիր թշնամիին դէմ, երբ ան յարձակի բերելով անհանգստութիւն, վախ, կասկած կամ դատապարտութիւն: Միայն ետ կը քաշուինք անկիւն մը եւ թոյլ կ'ուտանք որ մեզ հարուածէ, ես եւ դուն սատանային զբաղմունքի առարկան կ'ըլլանք:

Սատանան կ'ուզէ որ մենք մարդոց հետ պատերազմինք ու չարութեամբ լեցուինք անոնց հանդէպ: Ան կը ցանկայ գողնալ մեր կեանքը, հանգստութիւնը եւ խաղաղութիւնը: Բայց Աստուած կ'ուզէ որ պատերազմողներ ըլլանք, եւ հոգեւոր աշխարհի թշնամիներուն դէմ պատերազմինք:

Ո՞ՐՆ Է ԲՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

«Քանզի ուր նախանձ ու կռիւ կայ, հոն են անկարգութիւնը եւ ամէն չար բաները: Բայց վերին իմաստութիւնը նախ սուրբ է եւ խաղաղարար, հեզ, հլու, ողորմութիւնով եւ բարի պտուղներով լեցուն, անկողմնակալ եւ անկեղծ»:

Յակոբ. 3.16,17

Շփոթութիւնը վերստին ծնած քրիստոնեայի համար բնական վիճակ մը չէ, եւ Աստուած չի փափաքիր որ այդ վիճակի մէջ ըլլանք: Այդ պատճառով ամէն անգամ որ շփոթինք կամ անհանգստութիւն զգանք մեր հոգիներուն մէջ, պէտք է յարձակինք սատանային դէմ: Շատ անգամ կը մտածենք թէ ինչ է սխալը եւ չենք հասկնար որ կը գտնուինք հոգետր յարձակումի տակ: Յաջորդ սխալն այն է թէ, պատասխաններ կը փնտռենք, արթուն մնալու եւ աղօթք ընելու փոխարեն, ինչպէս Յիսուս մեզի պատուիրեց: Երբ զգաս որ անբնական վիճակի մէջ ես, արթուն կեցիր եւ աղօթք ըրէ. այսպէս կը սորվիս անդադար աղօթել (Ա Թեսաղ. 5.17): Բայց ի՞նչ է հաւատացեալին համար բնական վիճակը: Այս հարցին պատասխանելու համար եկէք ուսումնասիրենք որն է անկանոն վիճակը: Բնական վիճակ մը չէ երբ անհանգիստ ու ջղային կը զգաս, եւ կը փնտռես պատասխաններ հարցերու, որոնց պատասխան չունինք: Երբ մարդոց կարծիքը մեր մասին մտածումի առարկայ կը դառնար կը ճնշուինք ու կը մտածենք թէ

ձախողած ենք: Այս ամէնը հաւատացեալին բնական վիճակները չեն. Թերեւս այդ բոլորը բնական են ուրիշներուն համար. բայց Աստուած չի փափաքիր որ այդ բնական ըլլայ մեր կեանքին մէջ: Անոր ծրագիրը չէ որ մենք տանջանքի ու չարչարանքի մէջ ապրինք. երբ այսպիսի խորհուրդներ գան, պէտք է որ անկասկած գիտնանք, որ բոլորը սատանային սուտերն են:

Աստուածաբան Վոչման Նին, իր «Հոգեւոր մարդը» գիրքին մէջ գրած է, որ այս վիճակներուն մէջ հոգին կարիքը ունի կատարեալ ազատութեան: Ան պէտք է թեթեւութեամբ սաւառնի օդին մէջ... հաւատացեալը պէտք է գիտնայ թէ ինչ ծանրութիւն դրուած է հոգիին վրան:

Շատ անգամ ան ընկճուած կը զգայ, կարծես 1000 թոն բեռ կը ճնշէ իր սրտին վրայ... սատանան կ'օգտագործէ այնպիսի ճնշումներ, որպէսզի պայքարի հոգեւոր մարդոց դէմ և անհանգստացնէ զանոնք, ու անոնց ուրախութիւնէ եւ լուսաւորութիւնէ զրկէ: Ինչպէս նաեւ Սուրբ Հոգիին հետ գործելու անկարող կը դարցնէ... ազատ հոգին հիմքն է յաղթութեան... երբ հոգին

ընկճուած ըլլայ, միտքը ճիշդ ձեւով չի կրնար գործել, մեր բոլոր անդամները միասին կը գործեն, մենք մեզ պէտք է պահենք ազատ և բնական վիճակի մէջ: Այդ ընելու համար պէտք է Տէր Յիսուս Քրիստոսի առաջնորդութեան տակ ըլլանք:

ՔՐԻՍՏՈՍԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

«Մենք խորհուրդներ կը քակենք եւ Աստուծոյ գիտութեանը դէմ բոլոր հպարտացած բարձր բաները, ու բոլոր միտքերը Քրիստոսին կը հնազանդեցնենք և գերի կ'ընենք»:

Բ Կորնթ. 10.5

Տէրը մեզի յաղթութիւն կ'ուտայ սատանային դէմ, բայց այդ կ'ըլլայ միայն այն ժամանակ, երբ մենք Իրմէ խնդրենք, որ Ինք ներգործէ մեր մէջ: Ոչինչ չի կրնար փոխել մեր վիճակը, եթէ մեր ամբողջ ըրածը միայն նստիլ եւ երազել ըլլայ. Տէրը պատրաստ ու կարող է մեզի օգնելու, բայց պէտք է մենք քայլ առնենք: Պէտք է գործենք որպէսզի չմնանք անտարբերութեան, ծուլութեան թմրութեան, ընկճուածութեան, յուսալքման եւ

յուսախաբութեան մէջ: Մենք չենք կանչուած գործելու մեր զգացումներուն համեմատ: Մենք Իր ժողովուրդն ենք, ու կանչուած ենք Աստուծոյ խօսքը կատարելու մեր ամենօրեայ կեանքին մէջ: Այդ ընելու համար պէտք է հոգեւորապէս արթուն մնանք:




2



ՎԵՑ ԲԱՆ, ՈՐ ՄԵՐ ՈՂՁ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՊԷՏՔ Է ԿԱՏԱՐԵՆՔ

«Յովհաննէս մկրտիչին քարոզութեան օրերէն մինչև այսօր մարդիկ երկնքի արքայութիւնը ձեռք ձգելու համար ուժ կը բանեցնեն, և զօրաւորները ձեռք կը ձգեն զայն»:

Մատթ. 11.12



2



ՎԵՑ ԲԱՆ, ՈՐ ՄԵՐ ՈՂՋ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՊԷՏՔ Է ԿԱՏԱՐԵՆՔ

Մենք զօրութեամբ պէտք է առնենք Աստուծոյ թագաւորութիւնը, արդարութիւնը, խաղաղութիւնը և ուրախութիւնը (Հռովմ. 14.17):

Եթէ դուն յուսախաբութեան մէջ ես, շուտով կանգնեցուր սատանային յարձակումը: Իմ ծառայութեանս տարիներում ես իմ անձնական փորձառութենէս սորված եմ, որ վեց պէտք բաներ կան, որոնք հաստատապես է ընենք.

- Արտաձել հաստատամտութեամբ
- Աղօթել հաստատամտութեամբ
- Խօսել հաստատամտութեամբ
- Տալ հաստատամտութեամբ
- Գործել հաստատակամութեամբ
- Սիրել հաստատամտութեամբ

ԱՐՏԱԾԵԼ ՀԱՍՏԱՏԱՄՏՈՒԹԵԱՄԲ

«Կամ թէ եթէ թագաւոր մը ուրիշ թագաւորի մը հետ պատերազմելու երթալէ առաջ չի նստիր ու խորհիր թէ արդեօք տասը հազարով կրնայ դէմ կենալ անոր, որ քսան հազարով իր վրայ կուգայ»:

Ղուկ. 14.31

Մտածելը և ծրագրելը պատերազմի կարեւոր կէտերէն են: Մարդ արարածը պէտք է մտածէ ինչպէս պայքարիլ եւ յաղթել թշնամիին, առանց վտանքի կամ կորուստի: Ես եւ դուն նոյն բանը պէտք է ընենք մեր քրիստոնեական պատերազմին ժամանակ, ինչպէս նաեւ ամէն օր պէտք է մտածենք ինչպէս կարող ենք պարտքը վերադարձնել, ինչպէս կարող ենք տունը մաքրել, ինչպէս կարող ենք ւսելի լաւ ապահովել ընտանիքին պետքերը: Բայց նաեւ պէտք է մտածենք, թե ինչպէս կարող ենք շատ ւսելի մարդոց վկայել, ինչպէս կարող ենք օգնել աղքատ մարդոց, ինչպէս կարող ենք ւսելի շատ տալ Աստուծոյ:

Մտածէ այս մասին, հարցուր դուն քեզի թէ ինչպէս ւսելի օգտակար գործող մը կրնաս ըլլալ ծառայութեան մէջ: Անկասկած

Եթէ ընտանիք ունիս, պէտք է քու առաջին պարտականութիւնը ընտանիքդ ըլլայ: Պէտք չէ փոխես քու պարտականութեանդ հերթականութիւնը, նամանաւանդ եթէ պզտիկներ ունիս, պէտք է շատ ժամանակ անցնես անոնց հետ, մանաւանդ իրենց պատանեկութեան շրջանին: Բայց կարելի է ընտանիքը և ծառայութիւնը համատեղել: Ես այս կատարած եմ տարիներ շարունակ, ես իմ ծառայութիւնս սկսայ «Կեանք՝ Խօսքին մէջ», երբ իմ զաւակս միայն մէկ տարեկան էր: Դուն կարող ես ընել այդ բոլորը, եթէ Տէրոջմէ կանչուած ես այդ գործին: Եւ եթէ կ'ուզես այն բանը ընել, եղիւր ստեղծագործող: Մի նստիր միայն երազելով, թէ դուն աւելի կրնայիր ընել, եղիւր նախագործող և սկսիր հաստատուն կերպով մտածել:

ԱՂՕԹԵԼ ՀԱՍՏԱՏԱՄՏՈՒԹԵԱՄԲ

«Ուստի ալ համարձակութեամբ մօտենանք շնորհաց աթոռին, որպէսզի ողորմութիւնը ընդունինք ու շնորհք գտնենք պէտք եղած ատենը մեզի օգնելու»:

Եբր. 4.16

Աստուծոյ գահին առջեւ պէտք է գանք առանց վախի, վստահօրէն եւ համարձակութեամբ, այսինքն հաստատօրէն. պէտք չէ վախնալ ամչնալ Աստուծմէ. մենք կարող ենք երթալ Անոր քով եւ խնդրել Իրմէ ինչ բանի որ պէտք ունինք՝ Իր խոստումներուն համաձայն: Եբրայեցիս 3.20ի մէջ կը պատմէ մեզի Պօղոս, որ Աստուած կարող է առատութեամբ ընել ամէն բան, քանի որ համարձակօրէն խնդրեցինք. ուշադիր եղէք համարձակ բառին, հաւատացեալը պէտք է համարձակ, վստահ եւ զօրաւոր ըլլայ. երբ մօտենաս Աստուծոյ գահին, մօտեցիր հաստատակամօրեն:

ԽՍՕՍԵԼ ՀԱՍՏԱՏԱՄՏՈՒԹԵԱՄԲ

«Եթէ մեկը խօսի, Աստուծոյ պատգամներուն պէս թող խօսի»:

Ա Պետր. 4.11

Որպէս Աստուծոյ զաւակներ մեր խօսքը պէտք է ըլլայ անդրդուելի, եթէ ըսեմ անդրդուելի կերպով խօսիլ ոչ թէ մարմնի, այլ չար ուժերու դէմ անդրդուելի ըլլալ:

(Մատթ. 10.16) համարին մէջ Աստուած կը սորվեցնէ մեզի աղանիներու պէս միամիտ ըլլալ, իսկ (Առակ. 28:1) համարին մէջ կը սորվեցնէ առիծի նման համարձակ ըլլալ: Ես մեծ դժուարութիւն ունէի համադրելու այս երկու բաղդատութիւնները: Ապա յիշեցի դէպք մը. պաշտօնեայ մը, որու պատասխանատուն (ոչ հոգեւոր), օր մը զինք կը կանչէ եւ կ'սկսի յանդիմանել, բայց այդ պաշտօնեան մէկ բառ նոյնիսկ չի պատասխաներ իր պատասխանատուին, վստահելով Տէրոջ, որ Ան պաշտպանէ իր իրաւունքը: Այդ պաշտօնեան եթէ նոյնիսկ մարմնաւոր կերպով աղանիի նման միամիտ էր, բայց հոգիով զօրաւոր էր առիծի նման: Այսպէս թերեւս ատեններ եւ քու հետըդ կը պատահի: Մարմնաւոր կերպով ձեռընծալ մնանք, բայց հոգեպէս հաստատամիտ ըլլանք, թերեւս լսենք ծանր եւ վիրաւորիչ խօսքեր մեզի ուղղուած, բայց պէտք է դէմ դնենք հոգեւորապէս: Կրնանք մերժել մեր վրա եկած դատապարտութիւնը, եւ հոգիով աղօթել երբ մեզ կը վիրաւորեն:

Ետքը երբ մենք դուրս կ'ուզանք այդ իրավիճակէն, կրնանք հաստատօրէն իշխա-

նութեամբ խօսիլ հոգեւոր աշխարհի մէջ գտնուող թշնամիներուն դէմ, որոնք կը վիրաւորեն մեզ: Երբ ոեւէ անձ սկսի իմ դէմս պայքար մղել մարմնաւոր կերպով, անմիջապէս կ'ըսկսիմ հոգիով աղօթել, հոգեւորապէս պաշտպանելով իմ անձս: Տարիներ շարունակ թոյլ տուի, որ մարդիկ իմ վրաս ազդեն իրենց տրամադրութիւններով եւ փորձեցի մարմնաւորապէս դէմ դնել անոնց, բայց հասկցայ, որ այդ միջոցը օգուտ մը չ'ըներ, և հասկցայ, որ մեր պատերազմը մարմնի եւ արեան դէմ չէ, այլ հոգեւոր չար զօրութիւններու եւ իշխանութիւններու դէմ: Այսպիսով սորվեցայ թէ ինչպէս հոգեւոր պայքար մղելու եմ: Թերեւս պէտք ունիս դուն ալ նոյնը սորվելու: Եղիր միամիտ ինչպէս աղանին և համարձակ ինչպէս առիւծը: Երբ կը խօսիս մարդոց հետ, գլուխ մի ծռեր, մի դժգոհիր, մի տրտնջար: Հաստատ նայիր անոնց աչքերուն եւ խօսիր պարզ ու անկեղծ, վստահ, համոզիչ, հասկնալի ձեւով:

Հաստատ կեցուածքով ըսէ այն ինչ որ կ'ուզես ըսել: Մի ըլլար կեղծաւոր, անվստահ, անապահով, այլ եղիր համարձակ: Եթէ

կ'երգես կամ կը փառափանես զԱստուած, այդ ալ հաստատակամօրէն ըրէ: Երբ բան մը կ'ուզես ըսել, ըսէ ըսելիքդ որպէս Աստուծոյ մէկ մարգարեն, ուրախութեամբ, գթառատութեամբ, ողորմածութեամբ եւ հաստատակամօրէն:

ՏԱԼ ՀԱՍՏԱՏԱՄՏՈՒԹԵԱՄԲ

«Տուէք ու ձեզի պիտի տրուի, աղէկ չափով կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գոգը, քանզի այն չափով որ դուք կը չափէք, ձեզի պիտի չափուի»:

Ղուկ. 6.38

Ինչպէս որ կ'ուտաս, այնպէս ալ կ'ստանաս. երբ կը նայինք դրամապանակին, կամ գումարին, պէտք չէ որ ամենանուազագոյն գումարը դուրս բերենք, այլ ընդհակառակը պէտք է տանք այնպէս, ինչպէս Աստուած կ'ուտայ մեզի, առատօրէն:

Շատ կամ քիչ նուիրատութիւն չկայ. պէտք է սորվինք տալու մէջ ալ հաստատակամ ըլլալ, ինչպէս մեր քրիստոնեական կեանքի միւս մարզերուն մէջ: Ես կուզեմ տալ, եւ կը

փափաքիմ տալ միշտ, ամէն ժամանակ: Օր մը քրիստոնեական գրադարանի մը մէջ տեսայ սնտուկ մը, որուն վրայ գրուած էր. «50 ոսկիով երկու պզտիկներու կարող ես կերակրել»: Երբ մօտեցայ նուիրատուութիւնը դնելու, ներսէս ձայն մը ըսաւ, «դուն պէտք չունիս այս բանը ընելու, արդէն դուն միշտ կուտաս». հոգիս ներսիդիս զայրացաւ, եւ դրամապանակէս արեւի մեծ գումար մը դրի այդ սնտուկին մէջ, պարզապէս որ ցոյց տամ թէ ես կուտամ իմ ազատ կամքովը: Կրնաս դուն ալ նոյն բանը ընել, երբ զգաս տուած ատենդ. նոյն բանը, արեւիով տուր, որ ցոյց տաս սատանային թէ որչափ հաստատակամօրէն որոշած ես տալ:

ԳՈՐԾԵԼ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹԵԱՄԲ

Ձեռքդ ինչ որ գտնէ ընելու, բոլոր ուժովդ ըրէ... :

Ժողով. 9.10

Ինչ որ յանձն առնէք ընելու, պէտք է հաստատակամ կերպով ընէք: Ոեւէ մէկ պարտականութիւն վախով մի ընդունիր, մի

սարսափիր եւ մի փախչիր, բորբոքիր Սուրբ Հոգիով եւ համարձակօրէն յայտարարէ. «Այս այն գործն է, որ Տէրը տուաւ ինձի, եւ ես Սուրբ Հոգւոյն օգնութեամբ պիտի կատարեմ իմ ամբողջ կարողութեամբս, Աստուծոյ փառքին համար:

ՄԻՐԵԼ ՀԱՍՏԱՏԱՄՏՈՒԹԵԱՄԲ

«Այս է իմ պատուերըս, որ մէկզմէկ սիրեք, ինչպէս ես ձեզ սիրեցի: Ասկէ աւելի մեծ սէր մեկը չի կրնար ունենալ, որ մէկը իր կեանքը բարեկամներուն համար դնէ»:

Յովհ. 15.12

Որպէս Աստուծոյ Որդի, մարդոց պէտք է սիրենք, ինչպէս որ Աստուած մեզ կը սիրէ, սիրել հաստատակամօրէն եւ զոհողութեամբ:

Սիրելը ջանք ընել է, մենք չենք կրնար սիրել ռուէ անձ, եթէ համաձայն չենք գինը վճարելու: Անգամ մը քրոջ մը գեղեցիկ օղեր նուիրեցի: Մարմնաւոր կերպով կուզէի այդ օղերը ինձի պահել, բայց Հոգին ինձի ըսաւ, որ հնազանդ ըլլամ Տէրոջ եւ նուիրեմ: Որոշ ժամանակ չանցած այդ քոյրը ժողովի ընթացքին վկայեց եւ պատմեց, որ ինչպէս

այդ օղերը ընդունած էր որպես (ծրի պարգև): Նոյն վարկեանին Տէրը ինծի ըսաւ, որ այդ օղերը ծրի պարգև էր անոր համար, բայց ես դրամով ձեռք ձգած էի այդ օղերը. գին վճարած էի այդ օղերը գնելու: Նոյնպէս փրկութիւնը մեզի համար ծրի պարգև է, բայց Յիսուս Քրիստոս Իր կեանքը տուաւ, որ այդ պարգևը մեզի ընծայէ: Սէրը բոլոր պարգևներուն ամենամեծն է, երբ ցոյց տաս Աստուծոյ սէրը, ըրէ առանց շահախնդրութեան, այլ զոհաբերութեամբ ու հաստատակամօրէն:



3



**ԻՆՉՊԷՍ ՎԱՐՈՒԻԼ
ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԵԱՆ ՀԵՏ**



3



ԻՆՉՊԷՍ ՎԱՐՈՒԻԼ ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Յուսախաբությունը, ճախողությունն է մեր փափաքներում եւ երազներուն...

Երբ մեր յոյսերը ու փափաքները չեն իրականանար յուսախաբութեան մէջ կ'ինանք: Անձ մը չկայ որ յուսախաբութեան մէջ ինկած չէ. յուսախաբութիւնը իրականութիւն մըն է մեր կեանքին մէջ, որուն մէջ երբ ինանք, պէտք է շիտակ կերպով լուծենք հարցերը: Հակառակ պարագային, ան կործանումի կը տանի մեզ: Մարդիկ շատ անգամ կը կործանին առանց պատճառը գիտնալու: Անոնք չեն հասկնար թէ հարցը սկսած է փոքր յուսախաբութիւններէ, և ով որ ճիշդ լուծումը չի գտներ, կը կործանէ իր ապագան:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆԴ ԴԱՐՁՈ՛ՒՐ ԲԱՑԱՅԱՅՑ ՆՇԱՆՆԵՐՈՒՆ

Առտուն երբ արթննամ ու անհանգիստ կ'զգամ ու գլուխս կը ցալի, կը հասկնամ որ պաղ առած եմ: Ես կը մտածեմ, եթէ աղօթեմ եւ ստանամ (vitamin C կամ vitamin A) ու լաւ հանգստանամ, կրնամ կանխել հիւանդութեան: Շատ անգամ կը հասկնանք փոքր նշաններէն, որ պիտի հիւանդանանք եւ պէտք է ուշադիր ըլլանք, որ վիճակը աւելի չվատթարանայ: Յուսախաբութիւնը նաեւ նոյն ձեւով կը գործէ. ան ունի բացայայտող նշաններ, որոնց նկատմամբ հաստատ կեցուածք պէտք է ունենաք, ինչպէս ըսինք, երբ իմանանք սատանային յարձակումները, պէտք է անմիջապէս դէմ դնել. Շատ լաւ կ'ըլլայ եթէ սատանային դէմ դնենք սկիզբէն, երբ յուսախաբութեան զգացումը ունենանք, քան թէ սպասենք մինչեւ որ ինանք խոր ընկճուածութեան և յուսախաբութեան մէջ: Բոլորս ալ գիտենք որ աւելի լաւ է անմիջապէս ներել անձի մը, որ մեզ նեղացուցած է, քան թէ ներել ժամանակ մը ետք, թոյլ տալով որ սատանան մեզ բարկացնէ,

դառնացնէ, վշտացնէ: Նոյնպէս է պարագան յուսախաբութեան պարագային: Աւելի դիրին է շուտով ազատուիլ, քան սպասել որ ընկճուինք:

ՅՈՒՍԱԽԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ենթադրենք որ դուն կը մտածես պտոյտի մը երթալ կամ խնճոյքի, կամ բացօդեայ տեղ մը ճաշելու, կամ հարսանիքի, եւ յանկարծ երկինքը կ'անձրեւէ, այս յուսախաբութիւն է, բայց փոքր չափով, որմէ կարելի է ազատիլ: Այսպիսի պարագաներու մէջ ես սորվեցայ ըսել՝ «այս յուսախաբութիւնը ոչինչ բան մըն է, ըսել չէ որ աշխարհի վերջն է, ու ես պէտք չէ որ ընկճուիմ»: Յուսախաբութիւններ կան, որոնք աւելի լուրջ եւ վնասակար են, նամանաւանդ երբ մարդոց հետ կապ ունի, ու ոչ օդի կամ առարկայի հետ:

ՔԻՉԵՐՈՒՆ ՎՍՏԱՀԻԼ

«Բայց հնք Յիսուս, Իր անձը անոնց չէր վստահեր, վասնզի հնք կը ճանչնար ամէն մարդ»:

Յովհ. 2.24

Եկէք ընտրենք յաղթահարելը, եւ ոչ թէ յուսահատուիլը, քանի կեանքը կատարեալ չէ. նաեւ պէտք է սորվինք տոկալ, որով մարդիկ ինքնին կատարեալ չեն:

Ոեւէ մարդ կրնայ մեզ յուսախաբ ընել, եթէ շատ վստահինք իրեն: Այս դատել կամ քննադատել չէ, այլ հաստատ իրականութիւն մըն է: Աւելի նախընտրելի է շատ չվստահինք ուրիշներուն, եթէ նոյնիսկ այդ անձերը մեզի շատ մտերիմ են, կամ մեր ընտանիքին անդամներէն են: Հիմա այս կրնայ տարօրինակ կամ խորթ թուիլ շատերուն, յատկապէս անոնց, որոնք տարիներէ ի վեր վարժուած են վստահիլ ուրիշներու վրայ: Ինչպէս Յիսուս, նոյնպէս ալ մենք պէտք է սիրենք բոլոր մարդոց, բայց պէտք չէ ամբողջովին վստահիլ առանց իմաստութեան եւ հաւասարակշռութեան: Միայն յիմար մարդիկ կ'ընեն այս. ինչհիւ, որովհետեւ մարդիկ անպայմանօրէն, ուշ կամ կանուխ պիտի յուսախաբ ընեն մեզ, ինչպէս մենք յուսախաբ կ'ընենք ուրիշները, շատ անգամ: Մարդկային էութիւնը ապահովագրութիւն չունի յուսախաբութենէ եւ մեղքի մէջ իյնալէ: Միայն իմաստուն

մարդն է, որ կ'ընայ ղեկավարել եւ ապահովել իր անձը եւ ուրիշները: Ամենէն լաւ լուծումը յուսախաբութեան, անկե կարելի եղածին չափ շուտ փախչիլն է, եւ այդ ընելու լաւագոյն ձեւը հաւասարակշրուած ըլլալ մեր յուսալու մէջ, նամանաւանդ եթէ սպասածները եւ ցանկութիւնները մարդոց հետ կապ ունին.

«Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացնի, բայց անմիտ տղան իր մօրը տրտմութիւն է»:

Առակ. 10.1

Երբեմն զաւակներ յուսախաբութեան պատճառ կը դառնան իրենց ծնողներուն: Այսօր ծնողներու եթէ հարցնենք, զաւակները իրենց մտիկ չեն ըներ. մէկ ականջէն կը մտնէ եւ միւս ականջէն դուրս կ'ելլէ իր ծնողին ըսածը: Ես կը հասկնամ այս դեպքը: Իմ զաւակըս Դանիելը իր պատանեկութեան շրջանին այդպէս էր: Ես կը փորձէի խօսիլ իր հետ, բայց ինք այնպէս կը նայէր ինձի, կարծես բան մը չէր լսեր իմ խօսածներէս: Անգամ մը դպրոցէն պատժուած եկաւ որոշ պատճառով մը: Երբ հարցուցի թէ ինչու համար այդպիսի բան մը ըրաւ, ուսերը

թոթվեց առանց պատասխանի, իրեն ըսի այդ պատասխան չէ, ինչո՞ւ այս սխալը ըրիր, «չեմ գիտեր» պատասխանեց: Որքան կը հարցնեի իրեն թէ ինչու այդ սխալը ըրաւ, պատասխանը նոյնն էր՝ «ըսի, չեմ գիտեր

ինչու»: Ես խրատեցի իրեն, որ ուշադիր ըլլայ վարք ու բարքին ու դասերուն, որպէսզի ապագային կեանքը յաջողութեամբ դիմագրաւէ:

Յաջորդ օրը իրեն դպրոց դրկեցի յոյսով, որ մեծ բարելաւում եւ փոփոխութիւն պիտի պատահեր անոր կեանքին մէջ, բայց ան տուն վերադարձաւ դպրոցէն փոքր նամակով մը, որ կ'իմացներ թէ այդ օրը իր ամենավատ օրն էր դպրոց սկսած օրէն ի վեր: Այս ինձի եւ որեւէ համար, մօր մը յուսախաբութիւն է:

Նամանաւանդ երբ զաւակըդ կը մեծնայ, պատանի կ'ըլլայ եւ դուն աւելին կ'սպասես իրմէ: Որքան շատ մեծ է յոյսը և ցանկութիւնը, այնքան աւելի մեծ է յուսախաբութիւնը: Ու այս լուրջ հարցերու կրնայ տանիլ, եթէ անոնց շուտով լուծում չարուի:

ՓՈՔՐ ԱՂՈՒԵՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՓՃԱՑՆԵՆ ԱՅԳԻՆ

«Բռնեցէք մեզի աղուեսները, վասնզի
մեր այգիները ծաղկեր են»:

Երգ Երգոց 2.15

Փոքր յուսախաբութիւններ կրնան յուսահատութեան պատճառ դառնալ, եւ արդիւնքը մեծ վնաս կը կրենք: Կը յուսախաբուինք շատ փոքր անպէտք բաներէ, եւ նաեւ շատ անելի լուրջ հարցերէ, երբ մեր ակնկալութիւնները չեն կատարուիր, տան մէջ, կամ գործի մէջ, կրնանք յուսախաբուիլ եւ տխրիր: Օրինակ անձի մը հետ ժամադրուած ենք ճաշի, եւ ինք շիտակ ժամանակին չգար, կամ գնումի իջած ես շուկայ, որ զեղջի գինով բան մը գնես եւ կը տեսնես, որ այդ փնտռածդ արդէն իսկ ծախուած է: Կամ գեղեցիկ հագուստ մը հագուած ես եւ կը նկատես, որ այդ հագուստը պատռուած է: Բոլոր այս հարցերը փոքր են, բայց կրնան ցաւ պատճառել: Ուրեմն պէտք է շիտակ կերպով վարուիլ այսպիսի հարցերու հետ: Եթէ ոչ, այսպիսի հարցերը դուրս կ'ելլեն

իրենց սահմաններէն և շատ ատելի մեծ դժուարութիւններու պատճառ կը դառնան: Օրինակ մը: Պատկերացուր որ օրը կ'սկսիս ուշ արթննալով, եւ գրասենեակ գացած ժամանակ, ճամբան խճողումի կը հանդիպիս եւ ատելի կ'ուշանաս: Վերջապէս կը հասնիս, եւ գրասենեակ հասածիդ պէս, կը լսես որ մէկը բանբասած է քու մասիդ: Կերթաս որ սուրճ մը խմես գործի չ'սկսած, բայց յանկարծ հագուստիդ վրայ կը թափես սուրճը, եւ քիչ ետք շատ կարեւոր հանդիպում մը ունիս տնօրէնիդ հետ եւ ժամանակ չունիս հագուստըդ փոխելու: Այս բոլոր հարցերը քեզի շփոթումի եւ անհանգստութեան պատճառ կը դառնան:

Այս բոլոր խանգարումներին ետք, բժիշկէն լուռ կառնես, որ ըրած քննութիւններուդ արդիւնքը այնքան ալ լաւ չեն: Եւ յանկարծ նշանաձրդ կը հեռաձայնէ ըսելով, որ կ'ուզէ վերջ դնել ձեր յարաբերութեան, ինչպէ՛ս կ'ըլլայ քու վիճակդ. հաւանք, թէ ոչ դառն բարկութիւն: Բոլոր այս հարցերը քեզ նեղացուցին, ուշացումը բանբասանքը, սուրճին թափուիլը և քու ուժդ սպառեցին, մինչ արդէն ատելի խորունկ հարցեր ալ կան,

հիանդութիւնը եւ ճախող յարաբերութիւնը: Այս պատճառով պէտք է զգուշանանք փոքր աղուեսներէն, որոնք կը փճացնեն այգիները: Քանի փոքր հարցերը նոյն վնասները կը պատճառեն եւ կը տանին մեզի յուսախաբութեան: Պէտք է սորվինք Պօղոսէ, վարուիլ, ինչպէս ինք վարուեցաւ, երբ օձը իր ձեռքը խայթեց. ան պարզապէս թոթուեց իր ձեռքը (Գործք 28.1-5):

Եթէ մենք սորվինք արագ ձեւով լուծում տալ յուսախաբութեան, առաջքը կ'առնենք աւելի խրթին դժուարութիւններուն:




4



ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՄԻ ՎՐԱՅ

*«Ինչո՞ւ կը ցածնաս, ո՛վ իմ հոգիս,
և ինչո՞ւ իմ ներսիդիս անհանգիստ
ես, Աստուծոյ յուսայ. վասնզի անգամ
մըն ալ զանիկա պիտի գովեմ իր
երեսին փրկութեանը համար»:*

Սաղմ. 42.5



4



ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ՎՐԱՅ

Մենք մեր յոյսը պէտք է Աստուծոյ վրայ դնենք, քանի չենք գիտեր ինչ պիտի պատահի մեզի:

Աստուածաշունչի մէջ շատ անգամ Յիսուս կը ներկայացուի որպէս ժայռ, օրինակ (Ա Կորնթ. 10.4):

Կողոս. 2.7ի մէջ Պօղոս Առաքեալ կ'ըսէ, որ մենք հաստատուած եւ արմատացած պէտք է ըլլանք Անոր (ՅԻՍՈՒՍԻ) մէջ: Աստուածաշունչը որեւէ տեղ չի սորվեցներ մեզի որ մեր վստահութիւնը դնենք մարդոց վրայ, կամ մեր աշխատանքին, եկեղեցիին, ընկերոջ, ոչ ալ նոյնիսկ մեր անձին վրայ: Ոչ մէկը չի կրնար այնքան հաստատուն եւ կայուն ըլլալ

ՅԻՍՈՒՍԻ նման: Այս պատճառով չեմ փափաքիր որ մարդիկ իրենց վստահութիւնը դնեն իմ կամ իմ ծառայութեանս վրայ: Ես

կ'ուզեմ մարդոց ուշադրութիւնը ուղղել Յիսուսի: Քանի գիտեմ թէ վերջ ի վերջոյ, օր մը կրնամ յուսախաբ ընել զիրենք եւ յուսախաբուիլ իրենցմէ: Մարդկային բնութիւնը միշտ ենթակայ է ճախողութեան: Եթէ յոյսդ քու փրկութեան ժայռին վրայ չդնես, ուշ կամ կանուխ պիտի հասնիս կործանարար յուսախաբութեան:

ՄԱՐԳԻԿ ՍԽԱԼԱԿԱՆ ԵՆ

«Նեղութեան օրը անհաւատարիմ մարդու ապաւինիլը փշրուող ակռայի եւ դիրասահ ոտքի ապաւինելու պէս է»:

Առակ. 25.19

Աղջիկըս նշանուած էր, եւ շուտով պէտք էր պսակուէր, ամէն բան պատրաստ էր եւ պիտի պսակուէին, բայց փեսային անհաւատարմութեան պատճառով այդ պսակը չկատարուեցաւ եւ բաժնուեցան: Այս իսկապէս տխուր պատահար մըն էր, մանաւանդ երիտասարդ եւ անուշիկ հարսնացուի մը համար: Բայց այդ ժամանակ, աղջիկըս, փոխանակ տխրելուն

ինքն իր վրայ խղճալու, ըսաւ. «Լաւ է որ հարսանիքէս առաջ իմացայ թէ ինչպիսի անձ մըն է, եւ ոչ թէ ամուսնանալէս ետք, երբ արդէն շատ ուշ պիտի ըլլար»: Ես իմ աղջիկիս այս կեցուածքով այնքան ուրախ եւ հպարտ էի. ան յաղթեց յուսախաբութեան, եւ նաեւ ան հասկցաւ, թէ իրեն հետ պատահածը լաւ էր, քանի այդ պատահեցաւ հարսանիքէն առաջ ու ոչ թէ ետքը: Ան նաեւ սկսաւ լսել իմ ուսուցումներու ծայնագրութիւնները եւ կարդալ քաջալերող եւ հոգեւորապէս աճեցնող գիրքեր: Ան դուրս եկաւ իր դժուար վիճակէն, որով իր հաւատքը եւ վստահութիւնը ոչ թէ մարդու այլ Յիսուսի վրայ դրաւ: Եւ շարունակեց հետեւիլ Յիսուսին՝ իր Առաջնորդին, իր դժուարութիւններուն եւ յուսախաբութիւններուն մէջ:

Մենք ալ նոյնը պէտք է ընենք: Հիմա աղջիկըս ամուսնացած է շատ պատուաւոր անձի մը եւ մեր հետ միասին կը ծառայեն:

ՇԱՐՈՒՆԱԿԷ ՆԱՅԻԼ ՅԻՍՈՒՄԻ

«Ուստի մենք ալ, որ այսչափ վկաներու բազմութեամբ շրջապատուած ենք, ամէն

Ծանրություն մեր վրայէն մեկդի ձգենք, եւ մեզ դիրբաւ պաշարող մեղքը, ու համբերութիւնով վազենք մեր առջեւ դրուած ասպարեզի ընթացքը: Յիսուսի նայինք՝ մեր հաւատքի Առաջնորդին ու Կատարողին, որ Իր առջեւ կեցած ուրախութեանը համար խաչը յանձն առաւ, ամօթը արհամարիեց ու Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ: Արդ միտք բերէք զանիկա, որ այսպես համբերեց մեղաւորներուն Իրեն դեմ հակառակ խոսելուն, որ չըլլայ թէ ձեր անձովը յոգնիք ու թուլնաք»:

Եբր. 12.1-3

Ուեւէ անձ կարող է կանգնիլ ու ըսել. «Ես վազ անցայ ու ընթացքըս պիտի չջարունակեմ»:

Բայց քրիստոնեան պէտք չէ ըլլայ յրաժարող: Երբ Յիսուսը ընդունիս, քու կեանքիդ մէջ տարբեր բան մը կը պատահի. Ան Իր ուժը կը փոխանցէ քեզի եւ սքանչելի բան մը կը պատահի քու մէջըդ: Յիսուս քեզ բնաւ չի լքեր: Եթէ նոյնիսկ դուն ըսես՝ «Տէր, զիս մինակ ձգէ, չեմ ուզեր շարունակել», բայց Ան բնաւ չի ձգեր որ դուն վար իյնաս և ընկճուիս: Ինծի համար սովորական բան էր ճամբում կէսին կենալը: Բայց

հիմա իւրաքանչիւր օր կ'սկսիմ աղօթքով, Աստուածաշունչ կարդալով, մտածելով Աստուծոյ Խօսքին վրայ, եւ զԱստուած փնտռելով: Եթէ նոյնիսկ սատանան փորձէ զիս ըսելով՝ «Յիսուս ոչ մէկ բանով չ'օգներ, տարիներէ ի վեր դուն նոյնն ես, եւ տակաւին, նոյն հարցերը ունիս», այն ժամանակ իմ պատասխանըս կ'ըլլայ սատանային. «Ձայնդ կտրէ սատանայ, Աստուածաշունչը կ'սէ թէ, ես պէտք է Յիսուսի նայիմ եւ Անոր օրինակին հետեւիմ. Ան է իմ հաւատքի առաջնորդը, Ան է սկիզբը ու վերջը: Իմ աղջիկըս այս ըրաւ, քաջութեամբ, հոգիով քալեց, ու շարունակեց յառաջանալ, առանց ետ նայելու իր հետ պատահածին: Ան կրնար նայիլ իր անցեալին եւ ըսէր. «Այս բանը ուրիշ անգամ մը ալ ինձի պատահեցաւ, մէկէ աւելի անգամներ», բայց փոխանակ այդ ըսելու, ան շարունակեց Յիսուսի նայիր:

Այսօր ես եւ դուն նոյն որոշումը պէտք է առնենք, ինչ որ պատահի մեր կեանքին մէջ, պէտք է շարունակենք յառաջ երթալ առանց կանք առնելու, նայելով մեր հաւատքի առաջնորդին՝ Յիսուսին:

ՎԵՐԱԿԱՆԳՆԻՐ

«Իրարու վրայ միեւնոյն խորհուրդը ունեցէք, անբարտաւանութիւն մի՛ ընէք, հապա խոնարհներուն հետ խոնարհեցեք, ինքզինքնիդ իմաստունի տեղ մի՛ դնէք»:

Հոովմ. 12.16

Վերջերս կը մտածէի, թէ Տէրը իմ կեանքիս եւ ծառայութեանս ընթացքին ինչ մեծամեծ բաներ ըրած է: Ինծի համար շատ հաճելի է ետ նայիլ անցեալիս, բայց յաճախ շատ ալ դիւրին չէր կեանքը. ժամանակներ եղաւ, որ չէի ուզեր շարունակել եւ կը փափաքէի կենալ: Ես ձեզի հետ բաժնեկցեցայ թէ երբ յոգնիմ եւ յուսահատուիմ, Տէրը կ'սէ ինծի. «Ճոյս, երբ զգաս թէ յուսախաբուած ես, զօրացիր ու քաջալերուիր, քանի եթէ չքաջալերուիս պիտի ինաս յուսահատութեան մէջ, որ կը տանի կործանման: Անոր համար պէտք է սորվինք փոխել մեր ուղղութիւնը: Այս ըրաւ իմ զաւակս եւ այս շիտակ ուղղութիւնը զինք նոր կեանքի առաջնորդեց: Աւելի դժուար է նշանաձէր բաժնուիլ, քան թէ անձրեւոտ օդին բացօդեայ պտոյտի երթալ:

Բայց բոլոր պարագաներուն մէջ, ինչ ալ պատահի, պէտք է լուծումը գտնենք: Մինչեւ որ չսորվինք կանգնիլ եւ ուղղուիլ դէպի նոր ճամբան, բնաւ չենք գտներ այն նոր ու սքանչելի կեանքը, զոր Տէր Աստուած պահած է մեզի:



5



ՄՏԱԾԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

*«Բանի մը համար հոգ մի ընէք,
հապա ամէն բանի մէջ աղօթքով ու
աղաչանքով, գոհութիւնով մէկտեղ,
ձեր խնդրանքը Աստուծոյ յայտնի
ըլլայ: Եւ Աստուծոյ խաղաղութիւնը,
որ ամէն մտքէ վեր է, ձեր սրտերը ու
մտքերը Յիսուս Քրիստոսով պիտի
պահպանէ:»*

Փիլիպ. 4.6,7



5



ՄՏԱԾԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Եթէ չես ուզեր յուսախաբութեան պատճառով կործանուիլ, մոռցիր յուսալքումները: Գիտէք թէ ձեր զգացումները կապուած են ձեր մտքին հետ, եթէ չհամոզուեցաք որ այս ճիշդ է, 20 վայրկեան մը մտածէ քու դժուարութիւններուդ մասին, պիտի տեսնես որ քու զգացումներդ եւ դէմքի արտայայտութիւններդ պիտի փոխուին: Կրնաս բարկանալ կամ ընկճուիլ եւ կամ տրտմիլ, բայց այդ բոլոր զգացումները քու դժուարութիւններդ պիտի չլուծեն: Դուն կրնաս նոյնիսկ եկեղեցի երթալ, երգել ու քարոզներ լսել, բայց կը մնաս նոյն տխուր վիճակին մէջ, որով նստած ես եկեղեցիին մէջ, բայց կեդրոնացումը հարցերուդ վրայ է ու ոչ Տէրոջ վրայ:

ՈՐՈ՞Ւ ՀԵՏ ԸԵԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԵՄ

Անգամ մը ամսաթերթիս մէջ այս հարցումը հարցուցի իմ ընթերցողներուս, որով նոյն հարցումը, առտու մը Տէրը ինծի հարցուց, Ան ըսաւ. «Ճոյս, դուն քու հոգերդ կը պաշտեն, թէ Զիս»: Յետք Ան շարունակեց ու ըսաւ. «Մի՛ մտածեր քու հարցերուդ եւ դժուարութիւններուդ մասին, երբ յուսախաբուիս, մի՛ նստիր եւ դուն քու անձիդ վրայ մի խղճար, դուն միակը չես, որ յուսախաբութեան հանդիպած ես»:

Երբեմն աս մեզի համար դժուար է հասկնալ, որովհետեւ սատանան կը ջանայ համոզել, որ մենք ենք միայն որ կը հանդիպինք դժուարութեան: Այդ ճիշդ չէ: Անգամ մը ես քաջալերեցի իմ աղջիկըս, պատմեցի անոր իմ երիտասարդութեանըս փորձառութիւններէն (18էն մինչեւ 23 տարեկան): Երբ վերջացուցի խօսքերս, տեսայ թէ ան օրհնուած էր: Ինչպէս բոլոր մարդոց կը պատահի, աղջկաս ալ մի քանի դժբախտ դէպքեր պատահած էին: Ես ալ նոյնպէս, տարիներ դժբախտութիւններով լեցուն, սարսափելի կյանք մը ապրած էի:

19 տարեկան եղած ժամանակս, կապրէի Գալիֆօրնեայ նահանգին, Օքլանդ Քաղաքին մէջ: Այդ տունը իմ տունէս 3000 մղոն հեռաւորութեան վրայ կը գտնուէր. ինքնաշարժ, հեռատեսիլ եւ հեռաձայն չունէի: Ուեւ մէկը ինծի հոգ չէր տաներ: Պատմեցի նաեւ թէ ինչպէս ամէն գիշեր տխուր պատմութիւններ կը գրեի, խղճալով իմ անձիս վրայ, իսկ առաւօտեան գործի կը լծուէի: «Փանք Աստուծոյ, որ դուն ունիս լաւ ընտանիք, լաւ գործ, լաւ տուն, լաւ ինքնաշարժ», - ըսի իրեն,- «որով ասոնց ուեւ մէկը ես չունէի»: Երբ կեանքիս պատմութիւնը աւարտեցի, ան ոգեւորուեցաւ իր ներկայ ապրած կեանքին դրութիւններուն համար, եւ իր ապագային նկատմամբ: Այս է մեր ալ ընտրութիւնը. կամ կը ոգեւորուինք մեր ունեցած բարիքներով, եւ կամ յուսախաբութեան կը մատնենք մենք մեզի մեր չունեցած բաներուն պատճառով: Եթէ կ'ուզենք յաղթել յուսախաբութեան, պէտք է իրապաշտ ըլլանք եւ այս ճշմարտութեան համեմատ ապրինք: Իրականութիւնը կրնայ շատ տխուր ըլլալ: Մենք երկու ընտրութիւն ունինք: Մենք կրնանք ընտրել

կամ մեր հարցերուն ու տագնապներուն վրայ կեդրոնանալ, եւ կամ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը պաշտել: Կարելոր չէ ինչ կորսնցուցած ենք, կամ ինչ վիճակի մէջ ենք, մենք տակաւին կրնանք մեր այդ ժխտական մտքերը փոխել դրական մտքերով:

ՄՏԱԾԷ ԱՅՍ ԲԱՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

«Վերջապես եղբայրներ, ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ առաքինութիւն եւ ինչ գովութիւն որ կայ, անոնց մասին խորհեցէք»:

Փիլիպ. 4.8

Վեցերորդ եւ եօթերորդ համարներուն մէջ կ'ըսէ, եթէ հարցեր ունինք, պէտք չէ վշտանանք, անհանգստանանք, այլ պէտք է աղօթքով Աստուծոյ դիմենք: Եթէ մենք այս ընենք, Տէրոջը խաղաղութիւնը մեր սրտերը կը լեցնէ եւ կազատինք ամէն վախէ եւ անհանգստութիւնէ, եւ արթուն ու գգաստ կ'ըլլանք:

Ութերորդ համարին մէջ կը տեսնենք թէ ուրիշ բան մըն ալ կայ, որ պէտք է ընենք, որպէսզի լեցուինք Տէրոջը ուրախութեամբ եւ խաղաղութեամբ:

Պէտք է կառաւարենք մեր մտքերը, պէտք է մերժենք ժխտական մտքերը եւ դրական մտքերը ընդունինք: Առաջին պատուէրը, ճշմարիտ բաներու մասին մտածելն է:

Սակայն այս չի նշանակեր, որ մեր անցեալին մասին պէտք չէ մտածենք, քանի այդ դէպքերը իրապէս պատահած են մեզի հետ: Տարբերութիւն կայ իրականութեան եւ ճշմարտութեան մէջ:

Այն ամէնը որ պատահած են անցեալին, իրականութիւն են. սակայն Յիսուս եւ Իր խօսքերը ճշմարտութիւն են եւ անոնք անլի հզօր են իրականութէնէն: Հրաման տուէք, որ բացատրեմ մեր քոյրերէն մէկուն կեանքին օրինակով: Այս քրոջ ամուսինը մահացաւ եւ գնաց Տէրոջ քով: Ան հիմա երկինքն է եւ իր տիկինը չի կրնար տեսնել անոր, մինչեւ որ ինք ալ երթայ երկինք:

Ճշմարտութիւն է այս:

Սակայն իրականութիւնը այն է, որ այդ քրոջ կեանքը տակաւին կը շարունակուի

Եւ ինք ոչինչ ունի, որ անոր համար ապրի, սատանան այս սուտով կը մօտենայ եւ կ'ուզէ յուսահատեցնել իր սուտերով:

Իրականութիւնը այն է, որ այդ երիտասարդը որ իմ աղջկանըս նշանուած էր, խաբեց եւ շատ վիրաւորեց անոր: Բայց ճշմարտութիւնը այն է, որ անոր կեանքը չաւարտեցաւ յուսախաբութիւնով. ճշմարտութիւնը այն է, որ աղջիկըս իր առջելը ունի լեցուն կեանք մը Աստուծոյ օրհնութիւններով: Թէեւ իրականութիւնը այն է, որ աղջիկըս կորսնցուց իր սիրածը, բայց ճշմարտութիւնը այն է, որ ան ունի ապագայ, քրիստոնեայ ընտանիք,

իր անձնական ինքնաշարժը, լաւ գործ, իրեն հոգ տանող ընկերներ հզօրագոյնը Աստուած եւ Իր սէրը: Այս կորուստը պատահեցաւ իր տասնըիններորդ տարեդարձին. ինչ «գեղեցիկ» նուէր իր տարեդարձին առթիւ, բայց տխրելու եւ զայրանալու փոխարեն, ան շիտակ որոշումը առաւ: Ան ըսաւ. «Վաղը իմ ծննդեան 19րդ տարեդարձըս է, եւ իմ ապագայ կեանքիս առաջին օրը»: Ես այնքան ուրախ էի անոր կեցուածքով, եւ իր ապագային հանդեպ

ունեցած վստահութեամբը. իրեն պզտիկ օրագիր մը գնեցի եւ ըսի. «Այս գիրքին մէջ գրէ այն բոլոր հրաշքները, որոնք Աստուած պիտի կատարէ քու կեանքիդ մէջ այս տարուան ընթացքին: Եւ գալ տարի կը կարդանք միասին գրածներդդ ու կը տօնենք, քու 20րդ տարեդարձըդ. եւ այնպես ալ ըրինք:

Այս է, ինչ որ ես եւ դուն պէտք է ընենք: Թերեւս չունինք այնքան մեծ զօրութիւն կանգնելու յուսախաբութեան դեմ, բայց ունինք իմաստութիւն եւ ընտրելու կամք:

Կարելի է թոյլ տալ, որ մեր մտքերը լեցուին յուսախաբութեամբ, ու ամբողջովին կործանուինք. կամ կրնանք մեր ուշադրութիւնը ուղղել աւելի լաւ բաներուն, որ մեր կեանքին մէջ պատահած են, եւ յոյսով սպասել բոլոր բարիքներուն, զոր Աստուած պատրաստած է գալիք օրերուն համար:

ՅՈՅՄ ԵՒ ՍՊԱՍՈՒՄ

«Որպէսզի ճանչնամ զԱնիկա եւ
Անոր յարութեանը զօրութիւնը ու Անոր

չարչարանքներուն հաղորդ ըլլամ Անոր
մահուան կերպարանքը առնելով»:

Փիլիպ. 3.10

Այս համարին մէջ Պօղոս ունի նպատակ մը եւ յոյս մը, զոր մենք ալ պէտք է ունենանք: Մարդիկ շատ անգամ խոր յուսախաբութեան մէջ կապրին եւ այդ պատճառով կը կորսնցնեն իրենց նպատակը եւ յոյսը: Կըսկսին վախնալ եւ իրենց յոյսը կը դնեն որեւէ մէկ բանի, կամ որեւէ մէկ անձի վրայ: Բայց կրկին անոնք կըսկսին վախնալ յուսախաբութենէ եւ կը նախընտրեն չհաւատալ, որ իրենք կարող են համարձակութեամբ դէմ դնել այդ յուսախաբութեան: Կեանքի մէջ ամենատխուր բանը այն է, որ անոնք պարտուողներ կ'ըլլան, եւ ոչ թէ յաղթողներ, քանի յաղթանակը համարձակութենէն կ'ուզայ:

ՎԻՐԱԽՈՐԱՆՔԸ ԿԱՍԿԱԾ ԿԸՍՏԵՂԾԷ

«Որպէսզի մեռելներուն յարութեանը հասնիմ»:

Փիլիպ. 3.11

Երբ աղջիկ մը երիտասարդի մը կողմէ, մի քանի անգամ կը վիրաւորուի, կ'ըսկսի զգուշանալ եւ մտածել՝ «ես անգամ մըն ալ պիտի չի վստահիմ ռեւէ անձի մը», այս է սատանային փափաքը, եւ երբ այսպէս վարուինք, ուղղակի կը գտնուինք սատանային ղեկավարութեան տակ: Մէկը ըսած է. «Երբ դուն վիրաւորուիս, կ'ըսկսիս կասկածիլ»: Թերեւս այս բնական է. բայց այս ալ սատանային մէկ կերպն է, որ կ'օգտագործէ, մեզ խաբելու եւ ետ պահելու Աստուծոյ մեզի վստահած կեանքի նպատակին հասնելէ: Սատանան կը փափաքի, որ մենք կասկածամիտ ըլլանք: Ան կը յիշեցնէ մեզի մեր կեանքի մէջ պատահած դեպքերը, եւ կը համոզէ, որ չվստահինք ռեւէ անձի: Եթէ դուն վիրաւորուած ես, մի մտածեր, որ չես կրնար այլեւս մէկու մը վստահիլ: Եթէ այդ ընես, սատանային առիթը կ'ուտաս, որ գողնայ Աստուծոյ քեզի համար պատրաստած օրհնութիւնները: Պօղոս առաքեալ մէկ նպատակ ուներ, ան կ'ուզեր հասնիլ այդ նպատակին, կարելոր չէր թէ ինչ կը պատահեր իր հետ. իրեն, այս աշխարհի

փորձութիւններէն ոչ մէկ բան չէր ազդեր, ան կը շարունակեր իր ճանապարհը եւ կը նայէր իր առջեւ եղած նպատակին: Պօղոս առաքեալ իր նպատակին հասնելու համար պէտք էր որ քայլ առնէր, ան ոչ միայն Աստուծոյ պէտք էր վստահէր, այլ մարդոց ալ: Ան յօժար էր իր անձով երբեմն ենթարկուելու ձախողութեան ու կորուստի: Մենք ալ նոյնպէս պէտք է յառաջ երթանք դէպի մեր նպատակը, անկախ յարձակումներէ:

ԱՌԱՂ ԳՆԱ

«Չեմ ըսեր թէ արդէն յաջողած եմ, կատարելութեան հասած եմ, բայց հասնելու կը ձգտիմ, որովհետեւ ճիշդ ատոր համար Քրիստոս Յիսուս զիս պահեց: Եղբայրներ, ինքզինքս դեռ կատարելութեան հասած չեմ համարեր, բայց կաշխատիմ անցեալը մոռնալ եւ գալիքին նայիլ եւ ուշադիր կերպով կը վազեմ դէպի նպատակակետը, իբրեւ մրցանակ, ստանալու համար յաւիտենական կեանքը, որուն կը հրաւիրէ մեզ Աստուած, Քրիստոս Յիսուսով»:

Փիլիպ. 3.12-14

12րդ համարին մէջ Պօղոս կ'ըսէ, որ դեռ չէ հասած իր նպատակին, ոչ ալ կատարեալ եղած է, բայց ան չի յրաժարիր, այլ անելի յառաջ կերթայ: Այս սկզբունքը երկու մաս ունի. առաջինը՝ մոռնալ ամէն ինչ, որ կատարուած է անցեալին, եւ երկրորդը՝ յառաջ երթալ դէպի ապագայ: Այս կարեւոր դաս մըն է, որ մենք բոլորս պէտք է սորվինք: Պատկերացնենք կին մը, որ կորսնցուցած է իր ամուսինը, երբ ըսենք որ ինք պէտք է մոռնայ անցեալին կորուստը եւ առջեւ նայի դէպի ապագան: Այդ ըսել չէ, որ պէտք է մոռնայ իր ամուսինը եւ երբէք չհիշէ զայն. մենք կ'ուզենք հասկննել թէ, եթէ իր միտքը միայն կեդրոնացնէ անցեալին վրայ, վտանքի մէջ կինայ եւ կապրի անցեալով, փոխանակ ապագայ կեանքը ապրելու:

Կը յիշեմ մեր եկեղեցիին մէջ կին մը, որուն զաւակը մահացաւ 16 տարեկանին: Երբ տղան հիւանդ էր, մենք բոլորս աղոթեցինք եւ կը հաւատայինք, որ Աստուած պիտի բժշկէ զայն, բայց ան մահացաւ եւ գնաց Տէրոջ քով: Այս դժուար եւ ահռելի կորուստին մէջ Աստուած քաջալերեց այս մօրը: Ան մեզի պատմեց, որ օր մը, երբ

լուացք կնէր, իր ձեռքը ինկաւ կորսնցուցած զաւակին շապիկներէն մէկ հատը, եւ իր զգացումները չկրցաւ զսպել եւ սկսաւ լալ: Բայց պահ մը ետք անդրադառնալով իր վիճակին, ան վերջ տուաւ իր արցունքներուն եւ սկսաւ Յիսուսի անունով աղօթել, եւ դէմ դնել սատանային, ըսելով. «Սատանայ, այս շապիկը ես պիտի գործածեմ իբր փառափանութեան առարկայ, ես պիտի չխեղդուիմ տրտմութեան մէջ, այլ պիտի սկսիմ փառափանել»: Անցեալին կատարուած դժբախտութեան համար տրտմիլը շատ բնական է, բայց այդ որոշ ժամանակ մը: Ուշ կամ կանուխ, պէտք է յախթահարենք մեր տխրութիւնը եւ կորուստը, եւ գիտակցինք, որ այդ մեր անցեալն է, եւ շարունակենք դեպի ապագայ կեանք, Յիսուսի առաջնորդութեամբ:

Պօղոս մեր անկատարութեան մասին կը խօսի, երբ կը թելադրէ մոռնալ մեր ետին պատահածները եւ նայիլ ապագային եւ առջեւ եղած կեանքին:

Մենք կրնանք այս սկզբունքը գործածել մեր ամբողջ կեանքի ընթացքին, եթէ կը ցանկանք հասնիլ այն ամէն բաներուն,

որոնց Աստուած կանչած է մեզ ու օժած: Ուրեմն Պօղոսի պէս պէտք է նպատակ ունենանք եւ շարունակենք ապրիլ այդ նպատակին հասնելու համար:

ՆՈՐ ԲԱՆ

«Առաջուանները մի՛ յիշէք ու հին բաները մտքերնիդ մի՛ բերէք: Ահա ես նոր բան մը պիտի ընեմ, որ հիմա պիտի յայտնուի, մի՛թէ զանիկա պիտի չգիտնաք. ես անապատի մէջ ճամբայ պիտի բանամ ու անջրդի երկրի մէջ գետեր պիտի բխեցնեմ»:

Եսայի 43.18,19

Երբ անցեալին մասին մտածենք, զգոյշ պէտք է ըլլանք, որ տրտմութեան մէջ չ'ինանք. պէտք է ապրինք երախտագիտութեամբ եւ սպասումով, որ մեր առջեւը շատ մեծ բաներ կ'ըսպասեն: Իմ ծառայութիւնըս սկսելու համար պէտք է ձգէի եկեղեցիին մէջ իմ պարտականութիւնս իբր հովիւ, եւ այս շատ դժուար էր: Երկար ժամանակ տրտմած էի, որով եկեղեցոյ անդամներուն հետ իմ այդ

ընկերակցութիւնըս պիտի կորսնցնէի, ես պէտք է ձգէի իմ անցեալըս, բայց միտքս եւ զգացումներս թոյլ չէին տար: Վերջապէս յաղթեցի եւ ոգետրուեցայ ապագայով, բայց միեւնոյն ժամանակ տրտում էի, եւ այդ տրտմութիւնը կազդեր իմ նոր ծառայութեանս վրայ: Շատ դժուար ժամանակ էր ինծի համար, բայց այդ ընթացքին սորվեցայ ձգել այն ամէնը, որ անցեալին կը պատկանէր, եւ քայլ առնել դէպի նոր ապագայ.

Աստուած կը յիշեցնէր ինծի. «Դուն պէտք է ձգես այն ամէնը, որ անցեալէն է, անցեալը քու կեանքդ չէ այլեւս, հիմա ես նոր բան մը կուտամ քեզի»:

ԵՍ ԵՄ

«Աստուած ըսաւ Մովսէսին. «ԵՍ ԵՄ, ՈՐ ԷՄ», եւ ըսաւ. «Այսպէս պիտի ըսես Իսրայելի որդիներուն՝ զիս ՈՐ ԷՄը դրկեց ձեզի»: Դարձեալ Աստուած ըսաւ Մովսէսին. «Այսպէս պիտի ըսես Իսրայելի որդիներուն՝ ձեր հայրերուն Աստուածը, Աբրահամին Աստուածը, Իսահակին Աստուածը ու Յակոբին Աստուածը զիս ձեզի դրկեց»: Իմ

անունս յաւիտեան այս է, եւ ազգէ ազգ Իմ յիշատակս այս է»:

Ելից 3.14,15

Եթէ մենք շատ երկար ժամանակ կեդրոնանանք անցեալին վրայ, այդ մեզի վտանքի կը տանի: Ատեն, Տէրը մեզի կը յիշեցնէ (ինչպէս Մովսէսի հետ ըրաւ), որ Ինք է (ԵՍ ԵՄ)ը եւ ոչ թէ (ԵՍ ԷԻ)ն: Մենք պէտք է յիշենք այդ բոլոր բարի բաները, որ Աստուած ըրած է մեզի հետ անցեալին, ինչպէս որ ըրաւ Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ մնացած բոլոր հաւատարիմ մարդոց կեանքին մէջ: Բայց պէտք չէ որ միայն ապրինք անցեալի օրհնութիւններով, այլ տեսնենք ներկայիս օրհնութիւնները եւ ապագային գալիք կեանքի օրհնութիւնները: (Յովհաննու 8.58)ի մէջ կը կարդանք. «Յիսուս ըսաւ անոնց, ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աբրահամին ըլլալէն առաջ եմ ԵՍ»:

(Եբր. 13.8)ի մէջ կը կարդանք, թէ՛ «Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեանս»:

Այսպէս պէտք է ըլլայ մեր հաւատքը միշտ, յաւիտենական անսահման եւ անփոփոխ:

ԵՏԵՒԴ ՄԻՆԱՅԻՐ

«Յիսուս ըսաւ անոր. «Ով որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ թագաւորութեանը յարմար չէ»»:

Ղուկ. 9.16

Աստուած չուզեր, որ մենք անցեալով ապրինք, Ան գիտէ, որ եթէ մենք կարողութիւնը ունենանք ետ դառնալու եւ սկիզբէն սկսելու, այն նոյնը չըլլար, ինչպէս որ էր անցեալին:

Գիտես ինչու, քանի ինչ որ ապրեցանք անցեալին, անցեալին կը վերաբերի: Հիմա մենք կապրինք ներկան, երեկը անցաւ, հիմա ներկան է, որ մենք ունինք, մենք ներկայի մարդիկն ենք, եւ ներկայ կեանքը պէտք է ապրինք ամէն օր: Շատ անգամ մարդիկ կը կորսնցնեն իրենց ուրախութիւնը քանի կը փորձեն անցեալի օրհնութիւններով ապրիլ, որը այլեւս անցեալին կը պատկանի: Շատեր անցեալի Աստուծոյ օրհնութիւններուն վրայ հիմնուելով կը կարծեն թէ Աստուած կարող չէ այսօր ալ նոյն օրհնութիւնները տալ: Պէտք է անցեալը ետին ձգենք եւ մեր առջեւը նայինք ապագային, թէ Աստուած ինչ կ'ընէ

մեր կեանքերուն մէջ այսօր: Փանք Աստուծոյ, որ մենք կարող ենք յառաջ շարժիր՝ գիտնալով որ ան ծրագիր մը ունի մեզի համար:

ԵՏ ԿԸ ԴԱՌՆԱՍ ԿԱՄ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՍ

«Քանզի անոնք, որ այսպիսի բաներ կը խօսին, յայտնի կ'ընեն թէ գաւառ մը կը փնտոեն: Եւ յիրաւի, եթէ զանիկա յիշէին ուրկէ որ ելան, ժամանակ ունէին հոն դառնալու: Բայց հիմա լաւագոյն զաւառի մը կը փափաքին, այսինքն երկնաւորին, ուստի ամօթ չի սեպեր Աստուած անոնց Աստուածը կոչուիլը, վասնզի Ինք անոնց քաղաք մը պատրաստեց»:

Եբր. 11.14-16

Այս համարները կը վերաբերին իսրայէլացիներուն, որոնք դուրս եկած էին իրենց նախկին տունէն, բայց անոնք պէտք է անցնէին մի քանի դժուար փորձութիւններէ եւ դժուար ժամանակներէ, մինչեւ որ իրենց նոր տունը հասնին: Այս համարներուն մէջ կ'ըսուի նաեւ, որ եթէ իրենք կարօտով կը յիշէին այդ երկիրը, որ ձգած էին,

կարողութիւնը ունէին ետ վերադառնալու, բայց անոր փոխարէն, կը փնտռէին նոր երկիր մը, որ Աստուած իրենց խոստացած էր: Այսպիսով իրենք առաջ կ'երթային՝ արհամարհելով դժուարութիւնները ու փորձութիւնները:

Ընտրութիւնը մերն է: Կրնանք ընտրել ետ նայիլ, կամ նայիլ ապագային մեծ ակնկալութիւններով: Այս համարը չի նշանակեր, որ պէտք է մոռնանք անցեալին դժուար ժամանակները, կամ մեր սիրելիները որոնցմէ հեռացած ենք, այլ կը նշանակէ, որ պէտք չէ մեր մտքերը եւ սրտերը շարունակաբար ուղղել անցեալին, քանի որ եթէ այս ընենք պիտի կորսնցնենք այն, ինչ որ Աստուած պատրաստած է մեզի ապագային համար: Ուրեմն պէտք է որոշենք ետին չնայիլ, այլ յառաջ երթալ: Այս այսօրուայ պատգամն է: Պատուէր մը, որու պէտք է հնազանդինք այսօր եւ ամէն օր: Ես կը խորհէի թէ այս խօսքը կը վերաբերի միայն մեր անցեալի ունեցած սխալներուն եւ ձախորդութիւններուն: Սակայն օր մը հասկցայ, որ ես մտածելով նաեւ անցեալի յաղթութիւններու եւ յաջողութիւններու

մասին, կը տխրիմ: Երբ գործ մը վերջացնենք, պէտք է այդ մեր ետին ձգենք եւ յառաջ երթանք, առանց մէկ գործը միւսին հետ բաղդատելու:

Պէտք չէ ներկայի սխալները կամ յաջողութիւնները բաղդատել անցեալի սխալներուն եւ յաջողութիւններուն հետ: Եթէ այս ընենք, այդ պատճառ կը դառնայ, որ հպարտանանք եւ կամ յուսախաբուինք: Ասոր համար Տէրը մեզի (Երեմիա 43.18,19) համարներուն մէջ կ'ըսէ, որ չիշենք անցեալի բաները, ոչ ալ մտածենք, որովհետեւ անոնք անցան: Հիմա մենք պէտք է ուշադիր ըլլանք ու տեսնենք այդ նոր առիթները, զոր Աստուած կը պատրաստէ մեր աչքերուն առջեւ:

ԱՐՑՈՒՆՔՆԵՐՈՎ ՑԱՆԵԼ ԵՒ ՑՆԾՈՒԹԵԱՄԲ ՀՆՁԵԼ

«Անոնք, որոնք արցունքով կը ցանեն,
ցնծութիւնով պիտի հնձեն»:

Սաղմ. 126.5

Կարելոր չէ, ինչ պատահած է անցեալին մեզի հետ, կամ ինչ կը պատահի ներկայիս,

մեր կեանքը վերջացած չէ: Պէտք չէ արտօնենք, որ սատանան համոզէ մեզ ըսելով՝ «նոյն սխալը շատ անգամ կատարեցիր, եւ հիմա շատ ուշ է եւ յոյս չկայ քեզ համար»: Պէտք չէ մտիկ ընենք անոր, այլ ըսենք անոր. «Սատանայ, դուն ստախօս ես, եւ ամբողջ ստախօսներուն հայրն ես: Այսօր նոր օր մըն է, եւ ես հրաշքի կ'ըսպասեմ»: Միշտ հրաշքի պէտք է սպասել, քանի չենք գիտեր երբ, ինչ պիտի պատահի, եւ որովհետեւ չենք գիտեր երբ Աստուած կ'անցնի մեր քովէն:

Այս է որ կեանքը հետաքրքիր կը դարձնէ: Սատանան կը փափաքի, որ մտածենք թէ մեր ժամանակը երբէք չի գար, եւ հրաշք չ'լար, բայց եթէ մենք հաւատքով հաստատուն կենանք Յիսուս Քրիստոսի մէջ, ժամանակը կ'ուզայ, եւ հրաշքը կը տեսնենք: Ուրեմն պէտք է պատրաստ ըլլանք եւ այս պատճառով սատանային դէմ դնենք, որ մեզի ջուսահատեցնէ, եթէ յուսահատուինք, Տէրօջը պատրաստած ծրագիրը չի կատարուիր: Անոր համար, Աստուած մեզ Իր Խօսքին միջոցաւ կը քաջալերէ, որ ջուսահատինք, չհրաժարինք, չտկարանանք,

ցյուսախարուինք, որովհետեւ Ան գիտէ որ՝ «...իրիկունը լաց կայ, բայց առտուն ուրախութիւն» (Սաղմ. 30.5):

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԻՐ ԳՈՐԾԸ

«Այս մասին վստահ ըլլալով թէ Ան, որ ձեր մէջ բարի գործ մը սկսաւ, մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ»:

Փիլիպ. 1.6

Աստուած երբէք կիսատ չի ձգեր Իր սկսած գործը: Ան է սկիզբը եւ վերջը (Եբր. 12.2): Շատ յաճախ արգելքը մեզմէ է, ու ոչ թէ Աստուծմէ: Մենք թաղուած կ'ըլլանք անցեալին մէջ եւ ուշադրութիւն չենք դարձներ այն նոր բանին զոր Աստուած կընէ: Այն ինչ որ Աստուած երէկ ըրաւ, սքանչելի էր, բայց Ան կարող է նոյնը, աւելիով, այսօր եւ վաղն ալ ընել: Ասոր համար պէտք է այս հարցումը հարցնենք մենք մեզի, ինչ բանն է, որ կուզենք, անցեալը, թե ներկան:

ՆՈՐ ԳԻՆԻՆ ԵՒ ՆՈՐ ՏԻԿԵՐԸ

«Առակ մըն ալ ըսաւ անոնց.
«Մէկը նոր լաթ կտոր մը չի ձգեր
հին հանդերձի վրայ, եթէ ոչ այն
նորը պատրուածք ալ կընէ, ու այն
նոր լաթէն եղած կտորը հինցածին
հետ չի յարմարիր, և մէկը նոր գինին
հին տիկերու մէջ չի դնէր, եթէ ոչ,
նոր գինին տիկերը կը պատռէ, ինք
կը թափի, ու տիկերը կը կորսուին,
հապա նոր գինին նոր տիկերուն
մէջ դնելու է, որպէսզի երկուքն ալ
պահուին»»:

Ղուկ. 5.36-38

6



ՆՈՐ ԳԻՆԻՆ ԵՒ ՆՈՐ ՏԻԿԵՐԸ

Տէրը ինձի այս համարները ըմբռնելու նոր հասկացողութիւն տուաւ: Ես կը խորհէի թէ այս համարը կը վերաբերի շնորհքով եղած փրկութեան մասին, ու ոչ թէ օրէնքին գործերով միայն:

Հիմա կը տեսնեմ թէ այն նաեւ կը վերաբերի նոր մտածելակերպին մասին, զոր Յիսուս Քրիստոսով նոր արարածները պէտք է ունենան: Մենք յաճախ նորը կը փափաքինք ստանալ, բայց կը ջանանք պահել նաեւ հինը. Յիսուս ըսաւ, որ այս անկարելի է, եւ Իր ըսածը հասկցնելու համար այս օրինակը բերաւ, որ չես կրնար նոր կտոր մը հին հագուստին վրայ կարել: Այսինքն՝ Յիսուս ըսել կ'ուզէ, որ չկապենք հին կեանքը նոր կեանքին հետ: Ինչպէս նոր գինին չես կրնար լեցնել հին տիկերու մէջ:

ՈՐՆ Է ԼԱԽԱԳՈՅՆԸ

«Եւ մէկը հին գինին խմելէն յետոյ անմիջապէս նորը չուզեր, քանզի կըսէ թէ հինը ւաւիլի ախորժելի է» (Ղուկ. 5.39):

Գիտէ՞ք, մարդ արարածը ինչու կ'սէ, որ հին գինին ւաւիլի լաւ է, քան նորը: Որովհետեւ հինը ւաւիլի հանգստացուցիչ է, քան թէ նորը. ես նոր կեանքը ւաւիլի կը նախընտրեմ, եւ դուն հին կեանքը:

Տէրոջ հետ շարժելու ու յառաջ երթալու փոխարէն, կը փորձենք մնալ այնտեղ, ուր հանգիստ կեցած ենք: Դժուար է ուրիշ քաղաք տեղափոխուիլը, ունենալ նոր ընկերներ, գտնել նոր բժիշկ, նոր դպրոց, նոր եկեղեցի: Շատ անգամ տունին մէջ կը դժուարանանք կահկարասիները փոխելու, շատ ւաւիլի լաւ է մնալ այնտեղ, ուր որ կը գտնուինք, եւ ուրախ կ'ըլլանք այն բանով, որ գիտենք եւ ունինք: Բայց կը մոռնանք որպէս քրիստոնէսներ, որ մենք նոր ստեղծուածներ ենք:

ՆՈՐԸ ԵԿԱԾ Է

«Որեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած է. հիները անցան,

Եւ ահա ամէն բան նոր եղաւ»:

Բ Կորնթ. 5.17

Մենք պէտք է հասկնանք, որ նոր անձեր ենք Յիսուս Քրիստոսով, կանչուած ենք նոր կեանք ունենալու Անոր մէջ: Պէտք չէ վախնանք հանելու մեր վրայէն հին մարդը, որպէսզի ընդունինք այն ամէնը, որ Աստուած տուած է մեզի մեր նոր կեանքին մէջ: Տէրը հասկցուց այս ինձի, երբ խօսեցաւ ինձի հետ ու ըսաւ. «Չէս հասկնար ճոյս, հիները անցան, եւ ամէն բան նոր եղաւ. այս է հիմը նոր ստեղծուածին»:

Այս իրականութիւն կ'ըլլայ, երբ որոշում առնենք շարունակել նոր կեանքը:

**ԴՌՌՐՍ ԳԱԼ ՀԻՆ ԿԵԱՆՔԷՆ ԵՒ ՄՏՆԵԼ
ՆՈՐ ԿԵԱՆՔԻ**

«Քանզի Աստուած մեզի համար աւելի աղէկ բան նախապատրաստեց»:

Եբր. 11.40

Երբ Հնդկաստան ծառայութեան գացինք, հոն կեանքի պայմանները շատ դժուար էին.

նիւթապէս մարդիկ շատ խեղճ են հոն: Մենք աւելի դժուարութիւն կրեցինք, քան բնիկ հնդիկները. քանի իրենք ուրիշ ճար չունէին եւ ուրիշ մակարդակի կեանք չէին տեսած: Հնդիկներուն համար, ինչ որ ունին, միշտ նոյնն է: Մենք Ամերիկայի մէջ կապրինք հանգստութեամբ, եւ երբ Հնդկաստան գանք, կը տեսնենք ահռելի վիճակներ, ու այս բաղդատելով մեր կեանքին, որ Ամերիկայի մէջ ունինք: Ինչո՞ւ կապրիս տխուր, ընկճուած, յուսախաբ. որովհետեւ թերեւս քու հին կեանքդ կը փնտռես: Մի նայիր եւ մտածեր հին կեանքիդ մասին, նայիր առջեւդ գտնուող օրինեալ ապագային: Դուն որքան մտածես յուսախաբութիւններուդ մասին, աւելի կը յուսախաբուիս, եւ եթէ երկար ատեն մտածես այդ ձեւով, կը կործանիս եւ կինաս վտանքի մէջ:

Բայց Աստուած աւելի լաւ բաներ ունի քեզի համար: Այսօր նոր օր մըն է: Երբ յաջորդ անգամ յուսախաբութիւնը գայ, թօթափէ՛ գայն եւ հաստատ կանգնիր: Մոռցիր այն ամէնը, որ անցեալին պատահեցաւ, եւ առաջ գնայ մեծ յոյսով դէպի ապագան: Յիշէ, որ Տէրը նոր բան

մը պատրաստած է քու կեանքիդ համար.
մոռցի՛ր անցեալը եւ ապրի՛ր քու նոր կեանքդ.
Տէրոջ ուրախութեամբ:

Վերջաբան



«Որպէսզի Քրիստոս հաւատքով ձեր սրտերուն մէջ բնակի, եւ դուք սիրով արմատանաք ու հաստատուիք»:

Եփես. 3.17

Ես կոչ կ'ուղեմ, որ ուշադրութիւնդ դարձնես թէ ուր եւ ինչ բանի վրայ դրած ես քու յոյսդ եւ վստահութիւնդ (Եփես. 3.17) ի մէջ կ'սէ, որ արմատանաք եւ հաստատուիք սիրով: Մենք պէտք է արմատանանք եւ հաստատուինք Յիսուս Քրիստոսի սիրոյն մէջ, եւ ոչ թէ մեր վստահութիւնը դնենք մարդկանց կամ մեր զաւակներուն, կամ ընկերներուն եւ մեր աշխատանքին վրայ: Յիսուս Ինքն է Ժայռը, որ երբէք չսասանիր: Երբ փոքր յուսախաբութիւնները գան, եւ դուն արմատացած ու հաստատուած ըլլաս Ժայռին (ՅԻՍՈՒՍԻ) վրայ, հոգ չես ըներ, քանի դուն հաստատ ես Ժայռին վրայ, եւ կը շարունակես քու կեանքդ Իր ամբողջ օրհնութիւններով: Երբ մեծ յուսախաբութիւնները գան եւ յուսահատութեան մատնուիս, դուն կրնաս Տէրոջ դիմել ու Անկէ բժշկութիւն ստանալ, եւ Իր

զօրութեամբ որոշում առնել ու շարունակել յառաջ երթալ: Իսկ եթէ արմատացած ու կապուած ես ուրիշ բաներու, արդիւնքը՝ կը յուսալքուիս, յուսախաբուիս եւ կը կործանիս, որովհետեւ հաստատուն ժայռի վրայ չես հիմնուած: Սորվիր միշտ հաստատ կենալ, կարելի է ու շիտակ դիրք ունենալ մարդոց եւ կեանքի հանդէպ: Պէտք է ունեցած պատեհութիւններըդ եւ յարաբերութիւններըդ առաւելութիւն սեպել: Մի մտածեր յուսախաբութիւններուդ մասին, որոնց կը հանդիպիս կեանքի ընթացքին: Ձգէ, որ այդ յուսախաբութիւնները հեռանան քեզմէ, եւ թող տուր, որ Տէրը հոգայ քեզ: Շուտով առաջը առ յուսախաբութեան զգացումին եւ շիտակ որոշումներ առ, որ բժշկուիս: Փոխանակ հարցերուն վրայ կեդրոնանալու, կեդրոնացիր Աստուծոյ վրայ: Մտածէ Անոր խոստումներուն մասին, որ ճշմարտութիւն է, եւ աղօթքով քու անձդ նուիրէ Անոր: Արձանագրէ այն բոլոր բաները, որ տակաւին քուկըդ են, մի՛ կեդրոնանար կորսնցուցած բաներուդ վրայ:

Միտքդ կեդրոնացուր ներկային վրայ, ուր Աստուած գոյ է: Յիշէ թէ Յիսուս Իր մասին ըսաւ. «Ես եմ» եւ ոչ թէ՛ «Ես էի» կամ «Ես պիտի ըլլամ»: Ան հիմա քեզի հետ է: ԱՅՍՕՐՈՒԸՆԷ ԿԸՐՆԱՍ ՈՒՐԱԽ ԸԼԼԱԼ ՔՈՒ ԿԵԱՆՔՈՎԸԴ:



ԲԱԺԻՆ Բ



**ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ
ՀԱՄԱՐՆԵՐ**



ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐ՝ ՅԱՂԹԵԼՈՒ ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԵԱՆԸ

«Վստահ եմ թէ Տէրոջ բարութիւնը պիտի տեսնեմ ապրողներու երկրին մէջ. Տէրոջ սպասէ, ուժովցիր ու քաջասիրտ եղիր, դարձեալ Տէրոջ սպասէ»:

Սաղմ. 27.13,14

«Տեսայ թէ ամէն կատարելութիւն վախճան ունի, մինչդեռ Քու պատուիրանքդ չափազանց ընդարձակ է»:

Սաղմ. 119.96

«Տագնապի օրը անհաւատարիմ մարդու վստահիլը կոտրած ակռայի ու երերուն ոտքի ապաւինելու պէս է»:

Առակ. 25.19

«Քանի որ ձեզի համար մտածած ծրագիրներս գիտեմ,- կ'ըսէ Տէրը,- անոնք բարօրութեան ծրագիրներ են, ոչ թէ չարիքի, ձեզի ապագայ մը ու յոյս մը տալու համար»:

Երեմ. 29.11

«Բայց ես Տէրոջ պիտի սպասեմ, իմ փրկութեանս Աստուծոյն պիտի յուսամ, իմ Աստուածս ինծի մտիկ պիտի ընէ»:

Միքիա. 7.7

«Իրարու հանդէպ միեւնոյն մտածումը ունեցէք, բարձր բաներու վրայ մի՛ մտածէք, հապա խոնարհեցէք դէպի նուաստները» :

Հռովմ. 12.16

«Սիրելիներ, վրէժխնդիր մի՛ ըլլաք դուք ձեզի համար, հապա տէղ տուէք բարկութեան, որովհետեւ գրուած է՝ վրէժխնդրութիւնը Իմս է, Ես պիտի հատուցանեմ,- կըսէ Տէրը»:

Հռովմ. 12.19

«Հաւատարիմ է Աստուած, Որու միջոցաւ կանչուեցաք հաղորդակից ըլլալու Իր Որդիին, մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսին»:

Ա Կորնթ. 1.9

«Բայց ինչպէս գրուած է՝ աչք չէ տեսեր, ականջ չէ լսեր, ոչ ալ մարդու սիրտին մէջ մտեր են այն բաները, որ Աստուած պատրաստած է զինք սիրողներուն»:

Ա Կորնթ. 2.9

«Շնորհակալութիւն Աստուծոյ, որ ամէն ատեն մեզի յաղթութիւն կը շնորհէ Քրիստոսով, ու զինք ճանչնալուն հոտը մեզմով կը յայտնաբերէ ամէն տեղ»:

Բ Կորնթ. 2.14

«Ուստի բարիք գործելէ չձանձրանաք, քանի որ յատուկ ատենին պիտի հնձենք, եթէ չթուլնանք»:

Գաղատ. 6.9

«Նախասահմանեց մեզ Իր որդեգրութեան՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ, Իր կամքին բարեհաճութեան համաձայն: Որպէսզի գովաբանենք Իր շնորհքին փառքը. անով ընդունելի միջոցաւ դարձուց մեզ սիրելիին»:

Եփես. 1.5,6

«Ուրեմն Անոր, որ կարող է գերազանցօրէն աւելի ընել՝ քան ամէն ինչ որ մենք կը խնդրենք կամ կ'ըմբռնենք այն զօրութեան համեմատ, որ կը ներգործէ մեր մէջ»:

Եփես. 3.20

«Իսկ դուք՝ եղբայրներ, մի ձանձրանաք
բարիք գործել»:

Բ Թեսաղ. 3.13

ԱՂՕԹՔ՝ ՅԱՂԹԵԼՈՒ ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԵԱՆԸ



Հայր, Քու Խօսքդ լոյս է իմ ճամբուս:
Կը խնդրեմ, որ պահես զիս, որ իմ յոյսը
ինձի նման մարդոց վրայ չդնեմ, քանի
բոլորս ալ ենթակայ ենք յուսախաբուելու
եւ յուսախաբելու: Օգնէ՛ ինձի, որ
կարենամ ներել բոլոր անոնց, որոնք ինձի
վիրաւորած են անցեալին, եւ մոռնամ այդ
յուսախաբութիւնները եւ այդ ցաւցնող
յիշատակները: Դուն իմ Տէրս եղիր, որպէսզի
աւելի Քեզի նմանիմ, Դուն մեծցիր իմ մէջ,
ու ես փոքրանամ: Այս բոլորը կը խնդրեմ
Յիսուսի անունով: Ամէն:

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ



Եթէ տակաւին չես հրաւիրած Յիսուս Քրիստոսը, խաղաղութեան Իշխանը, որ քու անձնական Փրկիչըդ ըլլայ, քեզ կը հրաւիրեմ, որ հիմա որոշում առնես եւ աղօթես այս աղօթքը, եւ եթէ աղօթես անկեղծ կերպով, պիտի զգաս փոփոխութիւնը եւ նոր կեանքը Յիսուսով:

Հայր, Դուն այնպէս սիրեցիր աշխարհը, որ Քու Միածին Որդիդ տուիր մեր մեղքերուն համար, որ ամէն ով որ Անոր հաւատայ, չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Քու Խօսքդ կ'ըսէ որ փրկուած ենք շնորհքով հաւատքի միջոցաւ, եւ այս Քու պարգեւն է: Մենք ոչինչ չենք կրնար ընել որ փրկութիւն ստանանք: Ես կը հաւատամ, որ Ան վերցուց իմ բոլոր մեղքերըս, մեռաւ ինձի համար խաչափայտի վրայ գամուած, վճարելով իմ

մեղքերուս գինը: Կը հաւատամ, որ Դուն,
ո՛վ Հայր, Յիսուսի յարութիւն առնել տուիր
մեռելներէն: Քեզմէ կը խնդրեմ, Հայր, որ
ներես իմ մեղքերըս, եւ կը դաւանիմ Յիսուսը
որպէս իմ Տէրըս ու Փրկիչըս: Ես փրկուած եմ
եւ յաւիտենական կեանք ունիմ, Քու Խօսքիդ
համեմատ: Շնորհակալ եմ, երախտապարտ
եմ, Հայր, Յիսուսի անունով: ԱՄԷՆ:

Կարդացէք՝ Յովհ. 3.16, Եփես. 2.8,9
Հռովմ. 10.9,10, Ա Կորնթ. 15.3,4
Ա Յովհ. 1.9, 4.14-16, 5.1,12,13

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՄԱՍԻՆ



Ճոյս Մայրը Աստուծոյ Խօսքը կուսուցանէ 1976 թուականէն, իսկ 1980 թուականէն, ամբողջ իր ժամանակը Տէրոջ ծառայութեան տրամադրած է: Որպէս հովիւ ծառայած է «Կեանքի քրիստոնէական կեդրոն»ին մէջ, ան կազմակերպած էր ժողովներ, որ ճանչուած էր «Կեանքը Խօսքին մէջ» անունով: Հինգ տարիներ ետք, Աստուած զինք կանչեց իր անձնական ծառայութեան, որու անունն է «Կեանքը Խօսքին մէջ»:

Ճոյս Մայրի «Կեանքը Խօսքին մէջ» ռատիոհաղորդումը կը ծայնասփռուի աւելի քան 250 ազգային ռատիոկայաններու կողմէ եւ նաեւ իր հեռատեսիլի յայտագիրներուն, 2 պիլիոն մարդիկ կը հետեւին: Ան յաճախ կը ճամբորդէ՝ ղեկավարելով «Կեանքը

Խօսքին մէջ»ի համագումարները, որոնք հանդէս կուգան տեղական եկեղեցիներու մէջ: Ճոյս եւ իր ամուսինը Տէյւ, որ «Կեանքը Խօսքին մէջ»ի կառավարիչն է, ամուսնացած են Կալիֆոռնիոյ քան 31 տարիներէ ի վեր: Ունին չորս զաւակներ. երեք զաւակները ամուսնացած են, իսկ կրտսեր զաւակը իրենց հետ կապրի: Ճոյս կը հաւատայ, որ իր կոչումը մարդոց Աստուծոյ Խօսքին մէջ հաստատելն է: Ան ձայնագրած է Կալիֆոռնիոյ քան 165 տարբեր ձայներիզներ, եւ հեղինակն է 25 զանազան գիրքերու: Ան ստացած է բարձրաստիճանի վկայականներ զանազան Աստուածաբանական համալսարաններէ: Ճոյս կ'ըսէ, որ «Յիսուս մեռաւ, որ ձեռքազատէ կապուածները»: Ան կը փափաքի, որ հաւատացեալները վայելեն յաղթական կեանք Յիսուսով: Ինք անձնապէս, ասկէ տարիներ առաջ վայելեց այս յաղթական կեանքը ու գտաւ ազատութիւնը, երբ կատարեց Տէրոջը

Խօսքը իր կեանքին մէջ: Ճոյս կ'օգնէ կապուած մարդկանց, որ ստանան ազատութիւն եւ անոնց կ'օգնէ, որ մոխիրի տեղ ստանան գեղեցկութիւնը: Ինք կը հաւատայ, որ ամէն անհատ կարող է ապրիլ յաղթական կեանքը:

Կը քաջալերեմ, որ կարդաք իր գիրքերը, լսեք իր պատգամները եւ ի գործ դնեք առօրեայ կեանքին մէջ:



Ինչո՞ւ Յուսահատինք

Բոլորըս պլ ունեցած ենք
յուսախաբութեան պահեր, երբ մեր
փափաքները չեն իրականացած:
Շատ անգամ կը յուսահատինք, երբ
պարագաները տարբեր ուղղութիւն
կ'ստանան ու մեր յոյսերը չեն
իրականանար: Եթէ այս յուսախաբութեան
շիտակ դարման չգտնենք, թոյլ կուտանք,
որ սատանան մեզ տանի ընկճուածութեան
ու ջիղերու քայքայման:

Ճոյս Մայրիի այս Սուրբգրային
սկզբունքներով լեցուն գրքոյքները մեծ
վաճառք ունին. ասոնք կ'օգնեն քեզի, որ
Աստուծոյ Խօսքին ճշմարտութեամբ դէմ
դնես սատանային, որ կուզէ քեզ կործանել,
ու փոխանակ անոր մտիկ ընելով
յուսախաբուելու, կարենաս յաղթական
կեանքը ապրիլ Տէրոջմով:

Մի՛ ըլլար ձեռընծալ ու պարտուած
հաւատացեալ մը. գործածէ Յիսուս
Քրիստոսով ունեցած իշխանութիւնը՝
պայքար տանելու սատանային
ծրագիրներուն դէմ այսօր: